ARMENIAN FAMILY PRAYERS.

148

ԱՂՕԹՔ

ԸՆՏԵՂԵԿԵՆ ԵՒ ԱՌԵՆՁՆԵԿԵՆ։

Հ 29



London:
SOCIETY FOR PROMOTING CHRISTIAN KNOWLEDGE,
Great Queen Street, Lincoln's Inn Fields.

1876.

[illegible]
[illegible]

Աղօթք

Ընտանեկան և Առանձնական։

Կիրակի Առաւօտ.

Սրբազան Հաղորդութեան մերձենալէն առաջ։

Մաղթանք.

Յանուն Հօր և Որդւոյ և Հոգւոյն Սրբոյ.
Ամէն։

Խոստովանութիւն։

Ամենակարող Աստուած, Երկնաւոր Հայր մեր, Դու կը հրաւիրես քո ժողովուրդդ այնպիսի զարմանալի հաղորդութեան, որ քո սիրելի Որդւոյդ Մարմնոյն և Արեանը Աստուածային Խորհրդոցն մասնակից լինելով նոքա բնակին նորա մէջ և նա նոցա մէջ։ Մեք անարժան մեղաւորք, քո առջևդ մերձենալով և քո Աստուածային փառքդ տեսնելով՝ անձերնէս կը զզուինք և հողի ու մոխիրի վերայ կապաշխարենք։ Մեղանչեցինք, մեղաչեցինք, սաստիկ մեղանչեցինք քո դէմ խորհրդով, խօսքով և գործքով, քո բարկութիւնդ և սրտմտութիւնդ մեր դէմ արդարապէս բորբոքելով։ Մեր հին ուխտերը կոտրտեցինք, քո Սուրբ Անունդ անպատուեցինք և քո սուրբ սրբարանդ պղծեցինք։

Այսու ամենայնիւ, ով Ամենողորմ Հայր, ողորմէ հիմայ մեզի։ Յիսուս Քրիստոսի համար ներէ մեզ մեր բոլոր մեղքերը. քո Սուրբ Հոգւոյդ ներշնչմամբը

ազատէ մեզ ամեն աղտեղութենէ թէ հոգւոյ և թէ մարմնոյ. և շնորհէ որ մեք ալ այլոց 'ի սրտէ ներենք՝ ինչպէս որ կը խնդրենք որ Դու մեզ ներես, և ծառայենք քեզ կենաց նորոգութեամբ քո Սուրբ Անուանդ փառացն համար մեր Տէր Յիսուս Քրիստոսի միջոցաւը, ամէն:

Յոյց մեզ, Տէր, քո ողորմութիւնդ.
Եւ քո փրկութիւնդ տուր մեզ:
Տէր, լսէ մեր աղօթքը.
Եւ մեր աղաղակը քո առջևդ թող եկէ:
Ո՛ Ներ օգնութիւնը Տէրոջը անուամբն է,
Որ երկինքն ու երկիրը ստեղծեց:

Աղօթք անենք:

Ով Աստուած, Դու որ քո սիրելի Որդւոյդ արեամբը մեզ նոր ու կենդանի ճամբայ մի բացիր ամենասուրբ տեղը մտնելու, շնորհէ մեզ, կը խնդրենք քենէ, քո ողորմութեանդ վերայ վստահութիւն, և սրբացուր մեզ քո երկնային շնորհօքդ, որ մեք քեզ մաքուր սրտով և անարատ խղճիւ մերձենալով՝ քեզ արդարութեամբ զոհ մատուցանենք և ըստ արժանւոյն քո սուրբ խորհուրդներդ կատարենք քո Անուանդ փառացն համար մեր տէր Յիսուս Քրիստոսի միջոցաւը. ամէն:

Տէր, ողորմէ՛ մեզի.
Տէր, ողորմէ մեզի.
Քրիստոս, ողորմէ մեզի.
Քրիստոս, ողորմէ մեզի.
Տէր, ողորմէ մեզի:

Շնորհակալութիւն:

Ով Տէր, Ամենակարող Հայր, յաւիտենական Աստուած.

Դու, որ քո Միածին Որդւոյդ և Սուրբ Հոգւոյդ հետ՝ ի միասին Մի Աստուած և Մի Տէր ես։

Քանզի Դու ստեղծեցիր երկինքն ու երկիրը և անոնց մէջ եղած ամեն բաները։ Դու տուիր մեզ կեանք և էութիւն։ Քո Նախախնամութեամբդ երկրին պտուղները կը պաշտպանուին, և քո օրհնութեամբդ կը պահուինք մեք և բոլոր կենդանի էակները։ Դու մեզ պաշտպանեցիր մեր բոլոր օրերուն մէջ, Դու դարձեալ կը բերես մեզ քո առջևդ յաղթեցունելով քո ներկայութեամբդ, յաղթեցունելով քո ողորմութեամբդ և լիացունելով քո բարութեամբդ։

Այն ամեն պարգևացդ համար՝ որք մեզ ծանօթ են, և այն ամենուն համար՝ որ անծանօթ են, շնորհակալութիւն կը մատուցանենք քեզ։ Բայց գլխաւորապէս անոր համար, որ երբ մեք անհնազանդութեամբ յաւիտեան քենէ հեռացել էինք, Դու մեզ յաւիտենական մահուանէ ազատեցիր, և մշտնջենաւոր կենաց ուրախալի յոյսը պարգևեցիր Յիսուս Քրիստոսի միջոցաւը, որ ճշմարիտ և յաւիտենական Աստուած լինելով և բոլոր ժամանակներէն առաջ քո հետդ անճառելի փառաց և երջանկութեան մէջ բնակելով՝ երկինքէն իջաւ կատարեալ սիրով և կատարեալ սէրէ շարժեալ և մեր փրկութեանը համար ճշմարիտ Մարդ եղաւ։

Կօրհնենք քեզ անոր սուրբ Մարդեղութեանը համար, անոր երկրիս վերայ անցուցած կենացը համար, անոր խաչափայտին վերայ կրած չարչարանացն ու մահուանը համար, անոր մեռելներէն յարութիւն առնելուն համար, և անոր փառաւորապէս քո աջ կողմդ համբառնալոյն համար։

Կօրհնենք քեզ Սուրբ Հոգին տալուդ համար, քո Եկե-

ղեցուդ բոլոր Խորհրդոցն և կարգադրութեանցը համար, և ամենայն Սրբոց այս սրբազան Խորհուրդներովը ունեցած ամենօրհնեալ հաղորդակցութեանը համար։

Կօրհնենք քեզ մշտնջենաւոր կենաց յուսոյն համար, և այն փառացը համար, որ մեզի պիտի յայտնուի քո սիրելի Որդուդ գալու ժամանակը և անոր թագաւորութեան մէջ։

Քեզ Ամենակարող Աստուած, Երկնաւոր թագաւոր, կը մեծարանենք և կը գովենք։ Կերկրպագենք և կը փառաւորենք քո փառաւոր Անունդ, Հօր, Որդւոյ և Սրբոյ Հոգւոյն Անունը, միանալով հրեշտակաց և հրեշտակապետաց և երկնային ամենայն զօրաց, Քերովբէից և Սերովբէից երգաբանութեանցը քո աթոռիդ առջևը և երգելով քեզ.

Սուրբ, Սուրբ, Սուրբ, Տէր Աստուած Զօրաց, երկինք ու երկիր լի են քո փառօքդ։

Ովսաննա՝ ի բարձունս։

Օրհնեալ է՝ Նա՝ որ Տէրոջը անուամբը կուգայ։

Թող քո քահանայքդ այսօր արդարութեամբ հագուին։

Ովսաննա՝ ի բարձունս։

Եւ քո Սուրբերդ ուրախութեամբ աղաղակեն։

Տէր որ այսօր քո պաշտօնեայքդ քո խօսքդ քարոզեն Հոգւով Սրբով որ երկինքէն կիջնէ։

Տուր որ մեք և քո բոլոր ժողովուրդդ լսենք և խոնարհութեամբ հնազանդինք քո օրհնեալ խօսքիդ։

Հրամայէ՝ Դու, և մեծ պիտի լինի քարոզչաց խումբը։

Տուր որ այսօր երկնից մէջ մեծ ուրախութիւն լինի բազմաթիւ մեղաւորաց վերայ՝ որք կապաշխարեն։

Հ՝նորհէ որ քո ճանապարհդ ճանչցուի երկրի վերայ Քո փրկող զօրութիւնդ ամեն ազգաց մէջ։

Ով Տէր, պահել մեզ այսօր ամեն մեղքէ։

Եւ լեցուր մեզ քո Սուրբ Հոգւովդ Յիսուս Քրիստոսի համար, ամէն։

Աղօթք Կիրակի Առաւօտեան։

Ով Ամենակարող Աստուած և Ողորմած Հայր, Դու որ բոլոր մարդոց կը գթաս և ստեղծած բաներէդ ոչ մէկը չես ատեր, դու որ մեղաւորի մահը չես կամենար, հապա որ դառնայ իր մեղքէն և ապրի. ողորմութեամբ ներէ մեզ մեր զանցառութիւնքը, ընդունէ և մխիթարէ մեզ՝ որ մեր մեղաց բեռան տակը վշտացել ու. նեղուել ենք։ Քո ժառանգութեանդ միշտ ողորմութիւն պէտք է, և քեզ կը վայլէ մեղաց թողութիւն տալ. ուրեմն խնայէ, Տէր, մեզ, խնայէ քո ժողովուրդդ՝ զոր դու ազատեցիր։ Քո ծառայիցդ հետ դատաստանի մի մտներ՝ որք հող են և թշուառ մեղաւոր. հապա դարձուր քո բարկութիւնդ մենէ՝ որ խոնարհութեամբ մեր անպիտանութիւնը կը ճանաչենք և ճշմարտապէս կապաշխարենք մեր յանցանացը վերայ. և աճապարէ մեզի այս աշխարհիս վերայ օգնելու որ գալու, աշխարհին մէջ քեզ հետ յաւիտեան ապրինք, մեր Տէր Յիսուս Քրիստոսի միջոցաւը, ամէն։

Ով Տէր, կը խնդրենք քենէ, ողորմութեամբ լսէ մեր աղօթքը և խնայէ ամեն անոնց՝ որ իրենց մեղքերը քեզ կը խոստովանին, որպէս զի մեղքով ամբաստանեալ խիղճ ունեցողները քո ողորմած ներողութեամբդ արձակում ստանան մեր Տէրոջը Քրիստոսի միջոցաւը. ամէն։

Ամենակարող և Յաւիտենական Աստուած, Դու որ

քո Հոգւովդ Եկեղեցւոյ ամբողջ մարմինը կը կառավարես և կը սրբացուցնես, ընդունէ մեր աղաչանքը և աղօթքը, զոր քեզ կը մատուցանենք Ընդհանրական Եկեղեցւոյն Եպիսկոպոսաց, Երիցանց և Սարկաւագաց և բոլոր քո հօտիդ և ժողովրդեանդ համար (մանաւորապէս մեր պաշտօնէից և ժողովրդեանդ համար)։

Ղրկէ մեզի, կը խնդրենք, քո Հոգւոյդ բազմատեսակ պարգևները, և շնորհք տուր մեզի՝ որ զանոնք քո փառացդ համար այնպէս գործածենք, որ քո Եկեղեցւոյդ ամէն մէկ անդամը իր կոչմանը ու պաշտօնէութեանը մէջ քեզ ճշմարիտ և աստուածպաշտութեամբ ծառայէ, մեր Տէր և Փրկիչ Յիսուս Քրիստոսի միջոցաւը. ամէն։

Կը գովենք քո Սուրբ Անուանդ, ով Երկնաւոր Հայր, որ մեզ արթնցուցիր, ուրիշ Կիրակի առաւօտեան մը ևս լոյսը տեսնելու. կօրհնենք քեզ որ Կիրակի օրը շնորհել ես մեզ։ Շնորհէ որ այս քո սուրբ օրուանդ մէջ Հոգւոյդ առաջնորդութիւնը վայելենք։ Քրտաքսէ մեր սրտերուն մէջէն ամէն աշխարհային խորհուրդ և հոգ և թալէ մեր վերայ աղօթքի հոգի մը, պատրաստէ մեր սրտերը, երբ մեք քո տունդ կը դնանք։ Սորվեցուր մեզ քո Յիսուսդ սիրել։ Կը խնդրենք քեզ, շնորհէ մեզ այսօր քո զաւակացդ հայրական օրհնութիւնդ, և տուր որ ան մեր վերայ հանգչի և այս շաբաթ բոլոր մեր գործոցը մէջ մեզի հետ ըլլայ Յիսուս Քրիստոսի համար. ամէն։

Ղրկէ քո լոյսդ և քո ճշմարտութիւնդ որ առաջնորդեն ինձի։

Տուր որ նոքա տանին զիս դէպ 'ի քո սուրբ լեռդ և քո բնակարանդ։

Այն ժամանակ ես պիտի երթամ Աստուծոյ սեղանը, Աստուծոյ, իմ գերագանց ուրախութիւնս։

Այո, քնարով պիտի գովեմ քեզ, ով Աստուած, իմ Աստուածս,

Ես քեզի շնորհակալութեան զոհ պիտի մատուցանեմ,
Եւ Տէրոջը անունը պիտի կանչեմ։
Ես իմ ուխտերս Տէրոջը պիտի կատարեմ,
Իմայ իր բոլոր ժողովրդեան առջևը։
Դառք Հօր և Որդւոյ և Հոգւոյն Սրբոյ,
Այժմ և միշտ և յաւիտեանս յաւիտենից. ամէն։

Ով Աստուած, մեր ապաստանարանը և մեր զօրութիւնը, Դու որ ամէն աստուածպաշտութեան աղբիւրն ես, պատրաստ եղիր, կը խնդրենք քենէ, քո Եկեղեցւոյդ ջերմեռանդ աղօթքները լսելու. և շնորհք տուր մեզի հաւատարմապէս խնդրել՝ որ իրապէս ստանանք, մեր Տէր Յիսուս Քրիստոսի միջոցաւը. ամէն։

Առաջնորդէ մեզի, Տէր, մեր բոլոր գործերուն մէջը քո ամենամեծ հաճութեամբդ և յառաջ տար մեզ քո շարունակեալ օգնութեամբդ, որ մեք մեր ամէն գործոցը մէջ թէ քեզմով սկսուած լինին, թէ շարունակին և թէ վերջանան, քո սուրբ Անունդ փառաւորենք և յաւիտենական կեանք ընդունինք, մեր Տէր Յիսուս Քրիստոսի միջոցաւը, ամէն։

Ով Աստուած, Դու որ քո ժողովրդեանդ սրտերը քո Սուրբ Հոգւոյդ լոյսը անոնց ղրկելով կը կրթես, շնորհէ մեզի նոյն Հոգւոյն ձեռամբը ամէն բանի մէջ ուղիղ դատողութիւն ունենալ և միշտ անոր սուրբ մխիթարութիւնը վայելել, մեր Տէր Յիսուս Քրիստոսի միջոցաւը, ամէն։

Ով Հայր մեր, որ երկինքն ես, քո անունդ սուրբ լինի; քո թագաւորութիւնդ գայ, քո կամքդ լինի ինչպէս երկինքը այնպէս ալ երկրի վերայ. մեր ամեն օրուան հացը այսօր մեզի տուր, և մեզի ներէ մեր պարտքերը ինչպէս որ մեք կը ներենք մեր պարտականներուն, և մեզ փորձութեան մի տանիր, հապա չարէն մեզ ազատէ. ինչու որ քոյդ է թագաւորութիւնը և զօրութիւնը ու փառքը յաւիտեանս, ամէն:

Ներ Տէր Յիսուս Քրիստոսի շնորհքը, և Աստուծոյ սէրը ու Հոգւոյն Սրբոյ հաղորդութիւնը մեր ամենուն հետը լինի, ամէն:

Կիրակի Երեկոյ:

Խոստովանութիւն:

Ով Ամենողորմ Աստուած և Հայր, Դու, որ մարդոց սրտին գաղտնիքները դիտես, կը ճանչնանք ու կը խոստովանինք այն անթիւ մեղքերը, զորս խորհրդով, խօսքով և գործքով քեզի դէմ գործած ենք, մասնաւորապէս կողբանք մեր և քո ժողովրդեանդ այս քո սուրբ օրուանդ մէջ գործած մեղքերուն վերայ: Ով Տէր, ինչպէս կարող պիտի լինինք քո երկնային յաւիտենական շաբաթդ պահելու, մեք որ մէկ օր մը սուրբ չենք կարող պահել: Այսօր քեզի դէմ մեղանչեցինք աղօթքի ղանցառութեամբ, մեղանչեցինք մեր աղօթքը մէջ: Մեղանչեցինք քո Սուրբ Խօսքդ չկարդալով, և մեղանչեցինք քո խօսքդ կարդացած ժամանակնիս: Ներ ճամբաներուն մէջ քալեցինք և մեր հաճոյքը փնտռեցինք և մեր խօսքերը խօսեցանք քո սուրբ օրուանդ մէջ: Բոլոր մեր պաշտօնն ու պատարագները մեր մեղքերովը

պղծուեցան։ Ով Տէր Ամենասուրբ, ով Օրհնեալ և Ողորմած Հայր, ինչպէս որ Դու քո Որդւոյդ մահուամբը մեզ քեզ հետ հաշտեցուցիր, այնպէս ալ հիմայ մեզ անոր կեանքովը փրկէ։ Մեր սրբազան պարտուց մէջ ըրած զանցառութիւնքը մեր Մեծ Քահանայապետին վերայ դիր։ Եւ նորա անհուն արժանաւորութեամբը մեր, քո անարժան զաւակացդ նուէրները քո առջևդ ընդունելի լինին, և քեզ, մեր Եռանձնեայ Աստուծոյն մշտնջենական գովութիւն և փառք այժմ և յաւիտեանս յաւիտենից։ ամէն։

Սաղմ. իդ.

Տէրոջն է երկիրը, ու անոր լիութիւնը, աշխարհքը, ու անոր բնակիչները։

Ինչու որ ինքը անոր հիմերը ծովերուն վրայ ձգեց, ու զանիկայ գետերուն վրայ հաստատեց։

Ո՞վ պիտի ելլէ Տէրոջը լեռը, կամ ո՞վ պիտի կենայ անոր սուրբ տեղը։

Ձեռքերով սուրբը, ու սրտով մաքուրը, որ ստութեան անձնատուր չեղաւ ու նենգութեամբ երդում չըրաւ։

Անիկայ Տէրոջմէն օրհնութիւն պիտի ստանայ ու իր փրկութեանը Աստուածէն՝ արդարութիւն։

Անիկայ փնտռողներուն ցեղը աս է. քու երեսդ ինդրողները Յակոբն է։

Ով դռներ, գլուխնիդ վեր վերցուցէք, ու վերցունեցէք, ով յաւիտենական դռներ, որ փառաց Թագաւորը մտնէ։

Ո՞վ է աս փառաց Թագաւորը, կարող ու հզօր Տէրը, պատերազմի մէջ հզօր Տէրը։

Ով դռներ, գլուխներդ վերը վերցուցէք, ու վերցուեցէք ով յաւիտենական դռներ, որ փառաց Թագաւորը մտնէ։

Ով է այս փառաց Թագաւորը, զօրքերուն Տէրը, ինքն է փառաց Թագաւորը։

(Այս տեղ Աստուածաշունչէն գլուխ մը կարդացուի.)

Ով Յաւիտենական Աստուած, Դու որ քո սրբազան Առաքեալներդ բերնովը հրամայեցիր մեզ մեր մարմինները ընծայել կենդանի զոհ մը, սուրբ, քեզ հաճելի, որ է մեր բանաւոր պաշտօնը։ Թեղի կուգանք Յիսուս Քրիստոսի անուամբը, և կորոշենք ու կը նուիրենք անձերնիս գլխովին քո պաշտօնիդ, որ այսուհետև միայն քո փառացդ համար ապրինք։ Դու ես մեր Աստուածը և մեք քեզ պիտի գովենք։ Դու ես մեր Աստուածը, և մեք քեզ պիտի բարձրացուցնենք. շնորհակալութիւն կը մատուցանենք քեզ ով Տէր, որովհետև Դու բարի ես, և քո ողորմութիւնդ յաւիտեան կը տևէ, և Հօրդ, Որդւոյդ և Սրբոյ Հոգւոյդ փառք յաւիտեանս. ամէն։

Ով Ամենակարող Հայր, Դու, որ քո միածին Որդիդ Յիսուս Քրիստոսը քո աջ կողմդ բարձրացուցիր և անոր Իշխանութիւն տուիր Հոգւոյն. Սրբոյ լեռութիւնը իր մարմնոյն, Եկեղեցւոյն վրայ թափելու։ Սրբէ մեզ և բոլոր քո հաւատարիմ ժողովուրդդ նոյն Սուրբ Հոգւովը։ Շնորհէ մեզ քո հոգւոյդ բոլոր պարգևներն ու զօրութիւնները, որ քո պատուիրանացդ ճամբաներուն մէջը քալելով քո ճշմարտութեանդ վկայ լինինք, և աշխարհիս ամէն ծայրերը մեր Աստուծոյն փրկութիւնը տեսնեն, Յիսուս Քրիստոսի համար. ամէն։

Ամենակարող և Ամենողորմ Հայր, կօրհնենք քո Սուրբ Անունդ քո այն բոլոր ծառայներուդ համար, որ այս կեանքէս հաւատքով և երկիւղով զատուած են։ Շնորհակալ ենք քենէ, որ մեզ վստահութիւն տուել ես, թէ անոնք մարմինէն հեռանալով քո քովդ են, Տէր։ Կը խնդրենք քենէ որ մեզ շնորհք տաս, անոնց բարի օրինակին այնպէս հետևելու, որ անոնց հետ քո երկնային թագաւորութիւնդ մտնենք։ Շնորհէ աս, ով Հայր, Յիսուս Քրիստոսի, մեր միակ Միջնորդին և Բարեխօսին համար. ամէն։

Քո ընտրելոցդ թիւը լրացուր, ով Տէր, և քո գալդ մօտեցուր, և երբ Դու, ով Օրհնեալ Յիսուս, զօրութեամբ և մեծ փառքով գաս, շնորհէ որ մեք անոնց մէջ գտնուինք որ քո երևիլդ կը սիրեն, և որդի համար Դու անթառամ փառաց պսակ մը պատրաստեցիր, և քեզ Հօրդ և Սրբոյ Հոգւոյն հետ օրհնութիւն և պատիւ և փառք և զօրութիւն յաւիտեանս. ամէն։

Ով Հայր մեր, որ երկինքն ես ևն,

Ամենակարող Աստուծոյ, Հօր, Որդւոյն և Սրբոյ Հոգւոյն Օրհնութիւնը մեր ամենուս հետը լինի. ամէն։

Երկուշաբթի Առաւօտ։

Ով Տէր, Մեծ և Հզաւոր Աստուած, Դու, որ ուխտ և ողորմութիւն կը պահես անոնց, որ կը սիրեն քեզ և քո պատուիրանքներդ կը պահեն։ Մեք մեղանչեցինք քո օրէնքներէդ և դատաստաններէդ խոտորելով։ Ով Տէր, քեզի կը վայելէ արդարութիւն, ու մեզի՝ երեսի ամօթը։

Քո Որդւոյդ, Յիսուս Քրիստոսի արիւնովը ջնջէ մեր բոլոր մեղքերը։ Մեր մէջը մաքուր սիրտ ստեղծէ, ով Աստուած և մեր ներսի դէն ուղիղ Հոգի մը նորոգէ։ Քո փրկութեանդ ուրախութիւնը մեզի ետ դարձուր. քո կամաւոր Հոգիդ թող հաստատէ մեզ։ Ամբարիշտներուն պիտի սորվեցուենք քո ճամբաներդ, ու մեղաւորները քեզի պիտի դառնան։ Ով Տէր, մեր փրկութեանը Աստուածը, մշանջենաւոր ուխտին արեամբը մեզ կատարեալ ըրէ քո կամքդ կատարելու, Յիսուս Քրիստոսի համար. ամէն։

Ամենակարող և Ամենողորմ Հայր, Դու որ մեզի այս ինչպէս որ գալու կենաց Խոստմունքը տուել ես, կը խնդրենք քենէ, որ քո Օրհնութիւնդ մեր նիւթական պիտոյից վերայ թափես, և որ կերակուր ու հանդերձ ունենալով անով բաւականանանք և մեր օրերը խաղաղութեամբ ու հանդարտութեամբ անցունենք։ Բոլոր քո ծառայից հետը եղիր, որ հիմայ իրենց գործերուն կը գնան և մինչև երեկոյ կաշխատին և օրհնութիւն ու յաջողութիւն տուր անոնց ձեռացը գործերուն։ Դու շնորհքդ ղրկէ մեր վրայ, որ ուրախութեամբ մեր ձեռքերովը աշխատինք, որ կարող լինինք տալ կարօտ եղողին։ Շնորհէ որ մեք և քո բոլոր ժողովուրդդ քո սուրբ Եկեղեցւոյդ պաշտօնին և կարօտելոց օգնութեան համար այն համեմատութեամբը տանք՝ որ Դու մեր գործերը կը յաջողես։ Եւ Դու, ով Տէր, աղատէ աղքատներն ու վշտացեալները, ամեն հարստահարութենէ և նեղութենէ դուռ անոնց համբերութիւն ու գոհունակութիւն պարգևէ, մեր Տէրոջը Յիսուս Քրիստոսի համար. ամէն։

Ով Տէր, մեր շրթունքները բաց,
Ու մեր բերանը պիտի պատմէ քո գովութիւնդ։
Ով Աստուած, մեզ փրկելու արտորցիր.
Ով Տէր, մեզի օգնելու աճապարէ։
Փառք Հօր և Որդւոյ և Հոգւոյն Սրբոյ,
Այժմ և միշտ և յաւիտեանս յաւիտենից. ամէն։

Սաղմոս ճիսը.

Ալէլուիա։ Օրհնեցէք Տէրը երկինքէն. օրհնեցէք անիկայ բարձր տեղերուն մէջ։

Օրհնեցէք անիկայ, ով անոր բոլոր հրեշտակները. օրհնեցէք անիկայ, ով անոր բոլոր զօրքերը։

Օրհնեցէք անիկայ, ով արեգակ ու լուսին. օրհնեցէք անիկայ ով բոլոր փայլուն աստղեր։

Օրհնեցէք անիկայ, ով երկնից երկինք, ու երկինքէն վեր եղող ջուրերը։

Թող Տէրոջը անունը օրհնեն. ինչու որ ինքը հրամայեց ու անոնք ստեղծուեցան։

Եւ զանոնք յաւիտեանս յաւիտենից հաստատեց, կանոն դրաւ որ չխախանուիր։

Օրհնեցէք Տէրը երկրէն, ով վիշապներ, ու բոլոր անդունդներ։

Կրակ և կարկուտ ձիւն ու շոգի, և անոր խօսքը կատարող մրրկալից հով։

Լեռներ ու բոլոր բլուրներ, պտղատու ծառեր ու բոլոր եղևիններ։

Գազաններ ու բոլոր անասուններ, սողացողներ ու թևաւոր թռչուններ.

Երկրի թագաւորներ և բոլոր ազգեր, իշխաններ ու երկրի բոլոր դատաւորներ։

Երիտասարդներ և կոյս աղջիկներ, ծերեր ու տղաքներ։

Թող Տէրոջը անունը օրհնեն, ինչու որ միայակ անոր անունը բարձր է. անոր փառքը երկրէն ու երկինքէն վեր է։

Ընիկայ բարձրացուց իր ժողովուրդին եղջիւրը, իր բոլոր սուրբերուն, իր մօտ եղող ժողովուրդին, Իսրայէլի որդւոցը օրհնութիւնը. Ալէլուիա։

(Այս տեղ Սուրբ Գրքէն մաս մը կարդացուի։)

Աղօթք անենք։

Ով Աստուած, Դու որ հրաման ըրիր խաւարէն լոյս ծագել, ծագէ մեր սրտերուն մէջ Աստուծոյ փառաց գիտութեան լոյսը տալու համար Յիսուս Քրիստոսի անձովը։ Մենք ինքիրենիս բաւական չենք բան մը խորհելու որպէս թէ մեզմէ, հապա մեր բաւականութիւնը քենէ է։ Սրբէ Սուրբ Հոգւով քո Եկեղեցիդ՝ որ Որդւոյդ հոգևոր մարմինն է. որպէս զի քո բոլոր աշակերտներդ ուրախութեամբ և Սուրբ Հոգւով լեցուին։ Դարձուր քո Եկեղեցւոյդ Հոգւոյն բոլոր զօրութիւնները, պարգևները, շնորհքները և ու հանէ, կը խնդրենք, Եկեղեցւոյդ բոլոր պաշտօնէութեանցը հաւատարիմ մարդիկ, և քո ծառայներդ բաւական ըրէ իբրև պաշտօնեայ Նոր Այտնկարանի ոչ թէ գրոյն այլ հոգւոյն, քանզի գիրը, կը սպաննէ, բայց հոգին կը կենդանացուցէ, որ ամենքս ալ հասնինք հաւատքին և Աստուծոյ Որդին ճանչնալուն միութեանը, կատարեալ մարդ ըլլալու, Քրիստոսի

լման հասակին չափը ունենալու. մեր Տէրոջը՝ այն նոյն Յիսուս Քրիստոսին համար. ամէն։

Ով Աբրահամու, Իսահակայ և Յակոբայ Աստուածը, դիա կը խնդրենք, քո հին ժողովրդեանդ, Իսրայէլի տանը վերայ։ Աղատէ զանոնք իրենց սրտի կարծրութենէն և անհաւատութենէն, որ իրենց սրտերը քեզի դառնալով Յիսուս Քրիստոսի անձովը քո փառքդ տեսնեն և ճանչնան զԱստուածն իբրև իրենց փրկիչը, զոր իրենց հայրերը խաչը հանեցին. քո սուրբ Եկեղեցւոյդ ծոցը դան և ճշմարիտ Իսրայէլեդ մնացորդին հետ փրկութեան հասնին. ամէն։

Ով Ամենակարող Աստուած. Թագաւոր Թագաւորաց և Տէր տերանց. Դու, որ ամեն իշխանութիւն երկնից մէջ ու երկրի վերայ քո օրհնեալ Որդւոյդ տուել ես։ Օրհնէ, կը խնդրենք, քո ծառայդ... մեր Թագաւորն ու իշխանը, անոր պաշտօնատարները՝, խորհրդականները, գաւառաց կուսակալներն ու բոլոր կառավարութեան գործին մէջ եղողները։ Առաջնորդէ և կանոնաւորէ ամեն անոնց գործերը քո Եկեղեցւոյդ օգտին համար։ Եւ շնորհէ որ խաղաղութիւն և երջանկութիւն, ճշմարտութիւն և արդարութիւն, կրօնք և Աստուածպաշտութիւն հաստատուի մեր մէջը ազգէ մինչև ազգ, մեր Տէրոջը՝ քո սիրելի Որդւոյդ Յիսուս Քրիստոսի համար. ամէն։

Ով Աստուած, Դու, որ հաւատացելոց կեանքն ու խնարհներուն և հեզերուն փառք և արդարոց օրհնութիւն ես, քո խոնարհ ծառա ներուդ աղօթիցը նայէ և շնորհէ որ մեր քո խոստմանցը ծարաւ եղող հոգիները միշտ քո լիութենէդ յագենան, մեր Տէրոջը Յիսուս Քրիստոսի միջոցաւը. ամէն։

Ով Հայր մեր, որ երկինքն ես, ևն։

Ամենակարող Աստուծոյն, Հօր, Որդւոյ և Սրբոյ Հոգւոյն Օրհնութիւնը մեր հետ լինի. ամէն։

Երկուշաբթի Երեկոյ.

Ամենակարող և Ամենողորմ Հայր, մեք կը ճանչնանք և կողբանք մեր բազմաթիւ մեղքերն ու չարութիւնները, զորս ատեն ատեն և մասնաւորապէս այս օրուան մէջ քո Աստուածային Ս. Հափշտակութեանդ դէմ խորհրդով խօսքով և գործքով արինք քո բարկութիւնդ և սրտմտութիւնդ արդարապէս մեզ դէմ բորբոքելով։ Եռանդով կապաշխարենք և կը ցաւինք սրտով այս մեր չարագործութեան վերայ. Ողորմէ մեզի, ով Ամենողորմ Հայր քո Որդւոյդ մեր Տէր Յիսուս Քրիստոսի համար ներէ մեզի մեր անցեալ մեղքերը և մանաւանդ այս օրուանը։ Օրհնէ մեզ այս գիշեր, ով Հայր մեր, և շնորհէ մեզ անոնց երջանկութիւնը, որոց յանցանքները ներուած են և որոց մեղքերը ծածկուած են։ Եւ շնորհէ՝ որ մեք այսուհետև միշտ կենաց նորոգութեամբ քեզ ծառայենք և քո Ընտանդ փառացն համար մեր Տէր Յիսուս Քրիստոսի միջոցաւը. ամէն։

Տէր, ողորմէ մեզի.
Տէր, ողորմէ մեզի.
Քրիստոս, ողորմէ մեզի.
Տէր, ողորմէ մեզի.
Տէր, ողորմէ մեզի։
Ով Հայր մեր, որ երկինքն ես. ևն։

Ով Տէր, մեր շրթունքները բաց,
Ու մեր բերանը պիտի պատմէ քո գովութիւնդ.
Ով Աստուած, մեզ փրկելու արտորցիր,
Ով Տէր, մեզի օգնելու աճապարէ:
Փառք Հօր և Որդւոյ և Հոգւոյն Աստուծոյ,
Այժմ և միշտ և յաւիտեանս յաւիտենից.
ամէն:

Սաղմ. խզ.

Աստուած մեր ապաւէնը ու զօրութիւնն է, նեղութիւններուն մէջ խիստ օգնական կը գտնուի:

Անոր համար պիտի չվախնանք, թէ և երկիրը փոխուի, ու լեռները ծովուն մէջտեղը ձգուին:

Թէ և անոր ջուրերը գոռան ու պղտորին, լեռները դողան անոր ուռենալովը:

Գետի վտակները պիտի ուրախացընեն Աստուծոյ քաղաքը՝ Բարձրելոյն սուրբ բնակարանները:

Աստուած անոր մէջն է, անիկայ պիտի չսասանի. Աստուած անոր պիտի օգնէ առտուանց կանուխ:

Հեթանոսները կը խռովին, թագաւորութիւնները կը շարժին.

Բարձրեալը իր ձայնը կուտայ, երկիրը կը հալի:

Զօրաց Տէրը մեզի հետ է, Յակոբին Աստուածը մեզի ապաւէն է:

Եկէք ու տեսէք Տէրոջը գործքերը, որ սարսռումներ բրաւ երկրի մէջ:

Պատերազմները կը դադարեցընէ մինչև երկրի ծայրը. աղեղը կը կոտրտէ, ու նիզակը կը ջարդէ, կառքերը

կրակով կայրէ։ Հանդարտ կեցէք ու ճանչցէք, որ ես եմ Աստուած, հեթանոսներուն մէջ պիտի բարձրանամ։ Օրհնեցէք Տէրը մեզի հետ է, Յակոբին Աստուածը մեզի ապաւէն է։ Սելայ։

(Աստ՝ տեղ Սուրբ Դրքէն մաս մի կարդացուի։)

Ով Ամենակարող և Յաւիտենական Աստուած, Դու, որ քո սիրելի Որդւոյդ պատուական արեամբ Ընդհանրական Եկեղեցի մի գնեցիր քեզի, շնորհէ այս քո հօտիդ Հոգւոյն Սրբոյ նորոգութիւնը։

Բարեհաճէ ամեն ժամանակ քո Եկեղեցւոյդ պաշտօնէութեանը հաւատարիմ մարդիկ հանելու. և լեցուր զանոնք Հոգւով Սրբով, որ անոնք ոչխարաց այն միակ բարի Հովուին օրինակին հետևին։ Ով Տէր, կը խնդրենք քենէ որ հաւատարիմ Աւետարանիչներ ղրկես հեթանոսաց մէջ Քրիստոսի անքննելի ճոխութիւնը քարոզելու։ Արդիւնաւոր ըլլէ այսօր քո այդ Հոգւոյդ մէջ գործող ծառայիդ աշխատանքը և՝ այս գիշեր փայլեցուր քո երեսիդ լոյսը մեր և ամբոյր քո զաւակացդ վերայ, Յիսուս Քրիստոսի համար. Ամէն։

Ով Ամենաբարձրեալ Աստուած, Դու որ միայն բարձր ես, անմահութիւն ունիս և անմերձենալի լուսոյ մէջ կը բնակիս, այս բոլոր բաները քո իմաստութեամբդ ըրիր, լոյսը ու խաւարը զատեցիր, արեգակը ցորեկուան լուսնելու համար դրիր, և լուսինն ու աստղերը գիշերը ճառագայթելու համար։ Կը գովենք և կօրհնենք քո Սուրբ Անունդ, որ մեզի շնորհք տուիր հիմայ քո առջևդ գալու, որ երկրպագութեան ու գովութեան երեկոյեան զոհը մատուցանենք քեզ։ Խաղաղութիւն շնորհէ մեզի

այս դիշեր. Հագցուր մեզի լուսոյ սպառազինութիւնը, աղատէ մեզ խաւարին ամեն վտանգներէն. մեզի քուն շնորհէ, որ մեր յոգնած անդամները զօրանան. և պաշտպանէ մեզ դեւին բոլոր չարութիւնէն երբ արթուն լինինք, շնորհէ որ դիշերուան լռիկ պահերուն մէջ քեզ յիշենք: Եւ քեզ կը մատուցանենք փառք, պատիւ, շնորհակալութիւն և զօրութիւն Հօրդ, Որդւոյ և Սրբոյ Հոգւոյն. ամէն:

Ով Տէր Յիսուս, կօրհնենք քո Սուրբ Անունդ, Դու բարձրը ելար և պարգևներ ընդունեցիր մարդոց համար, Դու մեզի ամեն մէկերնուս տեղ կը պատրաստես քո Հօրդ տանը բազմաթիւ բնակարաններուն մէջ: Շնորհէ որ այս ընտանեաց ամեն մի անդամը առաջին յարութեան արժանի համարուի, և անոնց մէջ գտնուի որ քո ննջեցեալ սրբոցդ հետ պիտի յաւիտակուին գալստեանդ ժամանակը առջևդ ելլելու. ամէն: Շուտով եկուր, Տէր Յիսուս. ամէն:

Ո՛ր Տէր Յիսուս Քրիստոսի շնորհքը, և Աստուծոյ սէրը և Հոգւոյն Սրբոյ հաղորդութիւնը մեզի ամենուս հետ լինի. ամէն:

Երեքշաբթի Առաւօտ.

Ամենակարող Աստուած, Ողորմած Հայր, մեք անօրէնութեամբ ծնեալ ու մեղքով յղացեալ ենք. մեր սրտերը ամեն բաներէն աւելի խաբեբայ ու խիստ չար են: Ով կրնայ ըսել թէ քանի անգամ կը մեղանչէ: Ով Աստուած դուն մաքրէ մեզ մեր ծածուկ մեղքերէն. մեր մէջ այսինքն մեր մարմնոյն մէջ բարի բան մի չբնակիր: Խոնարհաբար կը խնդրենք քենէ, Քրիստոսի պատուական արեամբը լուա

մեզ մեր բոլոր մեղքերէն։ Մենք մեր անձերունը չենք, քանզի գնով գնուել ենք և մեր մարմինները Հոգւոյն Սրբոյ տաճարներն են այսօր մեզ ամեն մեղքէ պահէ, և կարողացուր մեզ՝ որ քեզ փառաւորենք մեր մարմիններովն ու հոգիներովը որ քուկդ են։ Ով Օրհնեալ Տէր Յիսուս, Դու որ մեր ամեն մէկին սրտի դուռը կը կանգնիս և կը զարնես, որպէս զի ներս մտնես, կը փափագինք հիմայ մեր սրտերուն դուռը քեզի բանալ և կը խնդրենք քենէ, եկուր ու մեր մէջը բնակէ այս ամբողջ օրը։ Ով Սուրբ Հայր, քո երեսիդ լոյսը փայլեցուր մեր վրայ և քո խաղաղութիւնդ և ուրախութիւնդ մեզի շնորհէ այս ամբողջ օրը, և մեզ քո Սուրբ Հոգւովդ լեցուր, Յիսուս Քրիստոսի համար. ամէն։

Դիշերուան խաւարէն մեր հոգին կանուխ քեզի կարթընայ, ով Ստուած, քանզի քո պատուիրանացդ լոյսը աշխարհիս վրայ է։ Սորվեցուր մեզ՝ որ քո վախովդ արդարութիւն և ճշմարտութիւն գործենք, որովհետև կը փառաւորենք զքեզ՝ որ ճշմարտապէս մեր Ստուածն ես։ Քո ականջդ խոնարհեցուր և լսէ մեզ. յիշէ, ով Տէր, մեր ամեն մէկը՝ որ հիմա քո առջևդ ենք և փրկէ մեզ քո զօրութեամբդ, օրհնէ քո ժողովուրդդ և սրբացուր քո ժառանգութիւնդ, խաղաղութիւն շնորհէ Եկեղեցւոյդ, ազգաց և բոլոր մարդոց։ Քանզի օրհնեալ և բարձրացեալ է քո Անունդ, ով Հայր, Որդի, և Սուրբ Հոգի, հիմայ յաւիտեան. ամէն։

Ով Հայր մեր, որ երկինքն ես, ևն։

Ով Տէր, մեր շրթունքները բաց,

Ու մեր բերանը պիտի պատմէ քո գովութիւնդ,

Ով Ստուած, մեզ փրկելու արտորցիր,

Ով Տէր, մեզի օգնելու աճապարէ։

Սաղմ. լդ. 3—11.

Ինձի հետ Տէրը մեծցուցէք,
Ու միկտեղ բարձրացուենք անոր Անունը.
Տէրը խնդրեցի՝ ու ինձի պատասխան տուաւ,
Եւ իմ ամեն երկիւղներէն զիս փրկեց։
Անոր նայեցան ու լոյս առին,
Եւ անոնց երեսները չամչցան։
Այս աղքատը աղաղակեց ու Տէրը լսեց անոր,
Եւ զանիկայ իր բոլոր նեղութիւններէն փրկեց։
Տէրոջը հրեշտակը իր բանակը անկէ վախցողներուն
չորս կողմը կը դնէ,
Ու զանոնք կը պահէ։
Ա՛ճաշակեցէք ու տեսէք որ Տէրը բարի է.
Երանի՝ ան մարդուն որ անոր կը յուսայ.
Տէրոջմէ վախցէք, ով անոր սուրբերը,
Վասն զի անկէ վախցողներուն բան մը պակաս չըլլար։
Առիւծի կորիւնները չքաւորութիւն ու անօթութիւն
կը կրեն,
Սակայն Տէրը փնտռողներուն բարութիւն մը պակաս
պիտի չըլլայ։
Եկէք, որդիք, մտիկ ըրէք ինձի,
Տէրոջը վախը ձեզի սորվեցընեմ։
Փառք Հօր և Որդւոյ և Հոգւոյն Սրբոյ
Այժմ և միշտ և յաւիտեանս յաւիտենից. ամէն։

(Այս տեղ Սուրբ Գրքէն մաս մի կարդացուի։)

Ամենակարող և միշտ կենդանի Աստուած, կը մերձենանք քեզ քո միածին Որդւոյդ Յիսուս Քրիստոսի, մեր Քահանայապետին և միակ Միջնորդին Անուամբը՝ որ

երկինքներէն վեր բարձրացել. քո աջ կողմդ կը նստի և միշտ կենդանի է մեզի համար բարեխօսութիւն ընելու։ Ո՛ր տկար աղերսները կը միացուենք քո ժողովրդեանդ խնդրուածքը, և քո Եկեղեցւոյդ աղօթքը, բարեխօսութեանցն ու շնորհակալութեանցը հետ, և կը խնդրենք՝ որ քո սեղանդ ելլեն և ընդունելի լինին և որ Դու մեզի շնորհք ընես և խաղաղութեամբ պատասխանես։ Դո առաջդ կը բերենք բոլոր անոնք՝ որոց համար աղօթել կուզենք, որ քո օրհնութեանդ ցօղը և Սուրբ Հոգիդ անոնց վերայ տեղայ։ Վերակենդանացուր մեզ, ով Աստուած, վերակենդանացուր քո Եկեղեցիդ, կը խնդրենք քենէ, ողորմէ ամեն մարդոց, քո փարախիդ մէջը Հրէաներէն և հեթանոսներէն ամեն անոնք որ փրկութեան պիտի հասնին։ Կատարելագործէ քո ընտրելոցդ թիւը. Առաքելոց, Մարգարէից, Աւետարանչաց, Հովուաց և ուսուցչաց պարգևներն ու պաշտօնները շնորհէ քո Եկեղեցւոյդ, և միացուր ու կատարելութեան առաջնորդէ քո բոլոր Սուրբերդ։ Կօրհնենք քո Սուրբ Անունդ բոլոր այն ծառայիցդ համար՝ որ այս կեանքէս հաւատքով և վախով զատուած են. կը խնդրենք քենէ, որ մեր Տէր և Փրկիչ Յիսուս Քրիստոսի երևիլն ու թագաւորութիւնը մօտեցուներս։ Օրհնէ, կը խնդրենք (այս անուն) քո ծառայդ մեր թագաւորը և ամեն անոնք որ անոր իշխանութեան տակ պաշտօն կը վարեն և շնորհէ՝ որ խաղաղութիւն և երջանկութիւն, քո ճշմարիտ կրօնքդ և Աստուածպաշտութիւն, արդարութիւն և ազատութիւն թագաւորէ մեր մէջը աղգէ մինչև աղգ։

Դու, ով Աստուած, մեր պաշտպանը, մեր կառավարը և մեր առաջնորդն ես, դու մեր Հայրը մեր բարեկամն ես։ Քո ձեռքդ կը յանձնենք ինքզինքիս և կը խնդ-

դրենք քենէ, որ մեզ այսօր քո հզօր զօրութեամբդ ամեն չարէ, ամեն մեղքէ և վտանգէ պահես։ Շնորհէ՝ որ մեր բոլոր գործքերը քո տնօրէնութեամբդ կարգադրուին, որ միշտ քո առջևդ ուղիղը ընենք։ Այսպէս դրդոյ կը փառաւորենք քո Անունդ, կը խոնարհինք և երկրպագութիւն կը մատուցանենք և քո մեծախառութիւնդ կը պատուենք, կը գովենք և կը մեծացուցնենք զքեզ մի Աստուածդ, երկնաւոր Հայրդ յաւիտենական Որդուդդ և Սրբոյ Հոգւոյդ հետ. ամէն։

Մեր Տէր Յիսուս Քրիստոսի շնորհքը, Աստուծոյ սէրը և Հոգւոյն Սրբոյ հաղորդութիւնը միշտ ձեր ամենուն հետը լինի. ամէն։

Երեքշաբթի Երեկոյ.

Ով Սուրբ Տէր Աստուած, մեր Երկնաւոր Հայրը, ծունկ կը չոգինք այս իրիկուն քո փառացդ աթոռին առջևը. Կը ճանչնանք մեր բոլոր մեղքերն ու զանցառութիւնները՝ որ այսօր խորհրդով, խօսքով և գործքով քո առջևդ գործեցինք, և կողբանք անոնց վերայ։ Գթա՛ մեզ, ով Աստուած, ու գիտցիր մեր սրտերը, նայէ մեզի և գիտցիր մեր խորհուրդները և ցուցուր մեր մէջ եղած ամեն մէկ չար ճամբան և մեզ դէպ 'ի յաւիտենական ճամբան առաջնորդէ։ Դու գիտես թէ մեք այսօր ինչպէսք էր ընէինք և չըրինք։ Ով Օրհնեալ Հայր շնորհէ՝ որ հիմայ մեր պառկելէն առաջ գիտնանք թէ մեր զանցառութիւնները ներուցեալ և մեր մեղքերը ծածկուցեալ են։ Ով քո հօտիդ բարի Հովիւը, որ երբէք չես ննջեր, մեր քնացած միջոցին հսկէ մեր վերայ, քո յաւիտենական բա-

զուկները մեր գլխոյն տակը դիր և շնորհէ որ քո Որդւոյդ դրօշը մեր վերայ ըլլայ. և արթնցուր մեզ առաւօտուն կանուխ զօրացած քո սիրովդ և լուսաւորուած քո ներկայութեամդ։ Մ՝եք ամենափոքր ողորմութեանցդ ու բարերարութեանցդ արժանի չենք, որովհետև անպիտան հող և թշուառ մեղաւոր ենք։ Այսու ամենայնիւ կը հաւատանք թէ քո սիրելի Որդւոյդ պատուական արեամբը ծախու առնուած և Սուրբ Հոգւովդ սրբացած ենք։ Շ՝նորհէ որ մեր աղօթքները խունկի պէս քո առաջդ ելլեն և մեր տարածուած ձեռքերը իբրև երեկոյեան ողջակէզ ընդունելի ըլլան։ Երկրպագութեամբ և դովաբանութեամբ կը միանանք քո աթոռդ շրջապատող հրեշտակաց և հրեշտակապետաց, բոլոր Քրիստոսով ննջող սրբոց և քո ամբողջ Եկեղեցւոյդ հետ՝ փառք, պատիւ, մեծութիւն, իշխանութիւն և զօրութիւն մատուցանելով Հօրդ, Որդւոյն և Սրբոյ Հոգւոյ։ Եւ հիմայ քեզ կը նուիրենք ինքզինքնիս, մեր հոգին ու մարմինը իբրև սուրբ և կենդանի ողջակէզ, մեր Տէրոջը Յիսուս Քրիստոսի համար. ամէն։

Տէր, ողորմէ մեզի.
Տէր, ողորմէ մեզի.
Քրիստոս, ողորմէ մեզի.
Քրիստոս, ողորմէ մեզի.
Տէր, ողորմէ մեզի.
Տէր, ողորմէ մեզի։
Գովեցէք Տէրը.
Տէրոջը Անունը գովեալ լինի։

Սաղմ. ՃԽԹ.

1. Ալէլուիա։ Տէրոջը նոր երգ երգեցէք.
Ու անոր օրհնութիւնը սրբոց ժողովին մէջ։
2. Իսրայէլը թող ուրախանայ իր Ստեղծողին վերայ.
Սիոնի որդիքը թող ցնծան իրենց թագաւորին վերայ։
3. Թող անոր Անունը պարով օրհնեն.
Թմբուկով ու քնարով սաղմոս թող ըսեն անոր։
4. Ինչու որ Տէրը իր ժողովրդեան կը հաւնի.
Խոնարհները փրկութիւնով պիտի փառաւորէ։
5. Թող սուրբերը ուրախանան փառքով.
Եւ իրենց անկողիններուն մէջը ցնծան։
Փառք Հօր և Որդւոյ և Հոգւոյն Սրբոյ,
Այժմ և միշտ և յաւիտեան յաւիտենից. ամէն։

(Այս տեղ Սուրբ Գրքէն մաս մի կարդացուի։)

Ամենակարող Հայր, ողորմութեամբ նայէ այս գիշեր մեր ընտանեաց ամեն մէկ անդամին և բոլոր մեր յարգելի տակը բնակողներուն վերայ և բոլոր անոնց վերայ որ բացակայ են, մասնաւորապէս (այս անուն). Շնորհէ որ մեր ամեն մէկը որ հիմայ հոս ներկայ ենք և բոլոր անոնք որոց համար կաղօթենք, քո ընտրեալ զաւակացդ թուոյն մէջ անցնին Յիսուսի արեամբը գնուելով և գլխովին Սուրբ Հոգւով սրբանալով։ Եւ շնորհէ որ բոլոր հոգին, միտքն ու մարմինը անարատ պահուին մինչև մեր Տէր Յիսուս Քրիստոսի գալու ժամանակը։ Ունենք գիտեր թէ ինչ տեսակ գիշեր պիտի գայ վրանիս. հիմայ պատրաստէ մեզ մեր օրհնեալ փրկչին գալստեանը համար,

անանկ որ երբոր դայ իմաստուն կուսանաց նման ու-
րախութեամբ դիմաւորենք զԱստուածն։

Ով Տէր, կը խնդրենք քենէ, օրհնէ քո Սուրբ Խօսքիդ բոլոր պաշտօնեայները և մասնաւորապէս մեր եկեղեցւոյնը։ Լեցուր զանոնք քո խօսքդ ուղիղ կերպով սորվեցուներն և նրբաշաղ Խորհուրդն երբ քո կամացդ համեմատ մատակարարեն։ Սրբէ Հոգւով Սրբով քո Ընդհանրական Եկեղեցիդ և մասնաւորապէս այս տեղի ժողովուրդդ։ Թող այն օրը շուտ դայ, երբ Աւետարանը պիտի քարոզուի ամեն աղգաց վկայութիւն ըլլալու համար։ Շուտ եկ, Օրհնեալ Յիսուս և տիրէ բոլոր աշխարհի վերայ։ Ով Երկնաւոր Հայր, առաջնորդէ մեզի քո Հոգւովդ ամեն ճշմարտութեան և տուր որ մեք ալ շնորհօք և դիտութեամբ աճինք։ Այսէ այն ամենուն վերայ որ աղքատութեամբ, հիւանդութեամբ, ցաւօք և նեղութեամբ պաշարուել են, և մխիթարէ ու աղատէ զանոնք, մեր Տէրոջը Յիսուս Քրիստոսի համար. ամէն։

Ով Հայր մեր, որ երկինքն ես, ևն։

Սէր Տէր Յիսուս Քրիստոսի շնորհքը, ևն։

Աղոթքշաբթի Առաւօտ։

Վիշերային մթութենէն մեր հոգին կանուխ արթննալով քեզի կը մօտենայ, ով Աստուած, քանզի քո պատուիրանացդ լոյսը աշխարհիս վերայ է։ Խաւարի մէջ թաղեցինք և ոչ թէ լուսոյ մէջ, բոլոր պատուէրներդ

կոտրեցինք և բոլոր ճամբաներէդ խոտորեցանք։ Ինչ որ պէտք էր ընել չըրինք և ինչ որ պէտք չէր ընել ան ըրինք։ Այս առտու քո Հայրական ողորմութեանդ կապաւինինք յուսալով որ Դու մեզ պիտի ընդունիս մեր Տէր Յիսուս Քրիստոսի արժանաւորութեանը համար։ Դու մեզ քո ընտանեացդ անդամ ըրիր, մեք լուսոյ որդիք ենք, խաւարինը չենք։ Շնորհէ մեզ Արդարութեան արեգակին լոյսը։ կը խնդրենք, Տէր, հանէ մեր սրտերէն ամեն մթութիւն։ պահէ մեզ այսօր ամեն մեղքէ, և պաշտպանէ մեր կեանքը ամեն որոգայթէ քո Հոգւոյդ կենիքովը, և մեր քայլերը խաղաղութեան ճամբուն մէջ առաջնորդէ։ Քուկդ ենք, Տէր, բոլորովին քուկդ, որովհետև Դու մեր սրտերը քո Որդւոյդ արեամբը մաքրեցիր, լեցուր զանոնք քո Սուրբ Հոգւովդ ալ։ Շնորհէ որ այս ամբողջ օրը Օրհնեալ Յիսուսի մէջ բնակինք և Դու ալ մեր մէջը բնակէ՝ որ շատ պտուղ բերենք։ Որովհետև քուկդ է թագաւորութիւնը և զօրութիւնը ու փառքը յաւիտեանս. ամէն։

Ով Տէր, մեր շրթունքները բաց,
Ու մեր բերանը պիտի պատմէ քո գովութիւնդ։
Դոհանանք Տէրոջմէն,
Տէրոջը Անունը գովեալ լինի։

Սաղմ. ճԺբ։

1. Ալէլուիա, Երանի անոր որ Տէրոջմէն կը վախնայ։
Ու անոր պատուիրանքներուն շատ կը հաճի։
2. Անոր սերունդը զօրաւոր պիտի ըլլայ երկրի վրայ։
Ուղիղներուն ցեղը պիտի օրհնուի։

3. Ճշմարտութիւն ու Հարստութիւն պիտի ըլլայ անոր տանը մէջ.
Ու անոր արդարութիւնը յաւիտեան պիտի մնայ։
4. Խաւարի մէջ լոյս կը ծագի ուղիղներուն.
Ողորմած ու գթած և արդար է։
5. Բարի մարդը կողորմի ու փոխ կուտայ.
Իր բաները իրաւունքով կը կատարէ.
6. Յիրաւի անիկայ յաւիտեան պիտի չսասանի.
Արդարին յիշատակը յաւիտեան պիտի մնայ։
7. Անիկայ գէշ լուրէն չվախնար.
Անոր սիրտը հաստատ է ու Տէրոջը կը յուսայ։
8. Անոր սիրտը հաստատուած է, չվախնար.
Մինչև որ իր թշնամիներուն կորուստը տեսնէ։
9. Տարածեց, աղքատներուն տուաւ. Անոր արդարութիւնը յաւիտեան կը մնայ, անոր եղջիւրը փառքով պիտի բարձրանայ։ Փառք Հօր և Որդւոյ և Հոգւոյն Սրբոյ,
Այժմ և միշտ և յաւիտեանս յաւիտենից. ամէն։

(Այս տեղ Սուրբ Դրքէն մաս մը կարդացուի։)

Ով Ողորմած Հայր, օրհնէ, կը խնդրենք քենէ, այս ընտանեաց բոլոր անդամները, թէ հոս ներկայ եղողները և թէ անոնք որ մեզի սիրելի են, մասնաւորապէս (այս անուն)։ Շնորհէ մեզի ամեն մէկերնուս նոր սիրտ մը նոր հոգի մը դիր մեր մէջը։ Բոլորովին հանէ մեր մէջէն քարեղէն սրտերը, և ամեն օր նորոգէ մեզ քո Սուրբ Հոգւովդ. քո սիրոյդ կատարեալ օրէնքը մեր սրտերուն վրայ գրէ, որ մեք քեզ սիրենք ամեն բանէ աւելի և մեր

ընկերները անձերնուս պէս։ Ազատեցուր մեզ, Տէր. ծուլութեան և անհաւատութեան քունէն։ Տուր որ աշխարհէս բոլորովին զատուինք և Տէր Յիսուս Քրիստոսինը ըլլանք։ Հ՚նորհէ որ միշտ խորին յարգանք ունենանք քո մեծափառութեանդ առջև, և Քրիստոսի սէրը շարունակ մեր մէջը վառի, լեցուր մեզ ուրախութեամբ և երախտագիտութեամբ քո մեծ փրկութեանդ համար՝ որ քո սիրելի Որդւոյդ Տէր Յիսուսի արեամբը մեզի պարգևեցիր։ Հ՚նորհէ որ մեր բոլոր գործոց մէջ ամենէն առաջ մեր փրկչին փառքը փնտռենք, Յիսուս Քրիստոսի համար. ամէն։

Ով Յիսուս, մեր Քահանայապետը, թափէ այսօր լուսոյդ ճառագայթները քո մարմնոյդ՝ Եկեղեցւոյն վրայ, օրհնէ այն ամեն ջանքերը՝ որ այսօր մեղաւորաց փրկութեան համար կըլլան։ Հ՚նորհէ, որ քո ժողովուրդդ Հոգւոյն միութիւնը խաղաղութեան կապովը պահէ, որ քո Եկեղեցիդ մէկ մարմին մը ըլլայ, ինչպէս որ Որդին և Հայրը մէկ էք, և աշխարհք քեզի հաւատայ իբրև Փրկիչ ամեն մարդոց։ Օրհնէ, Տէր, քո հին ժողովուրդդ՝ Հրէաները. վերցուր կուրութիւնը անոնց աչքերէն, որ Յիսուսը իբրև իրենց Մեսիան և թագաւորը ընդունին։ Ով Աստուած շուտ թող գայ այն օրը՝ երբ հեթանոսաց լուութիւնը պիտի մնայ և այսպէս բոլոր Խրայէլը պիտի փրկուի։ Ով Աստուծոյ մեծութեան և իմաստութեան և գիտութեան խորունկութիւնը. ինչորա անքննելի են քո դատաստաններդ, ու անշննելի են քո ճամբաներդ. ամեն բան քենէ, քեզմով և քեզի համար են. և քեզ՝ Հօր, Որդւոյ և Սրբոյ Հոգւոյն փառք յաւիտեանս. ամեն։

Ով մեր Երկնաւոր Հայրը, Դու որ չես կամիր մարդոց՝ վիշտ ու նեղութիւն ղրկել, հապա անոնց վշտացը վշտակից կըլլաս. նայէ այսօր ողորմութեամբ բոլոր աղքատաց և վշտացելոց վերայ. մխիթարէ զանոնք ամեն միջոցով առատօրէն համբերութիւն տուր անոնց իրենց նեղութեանցը մէջ, և շնորհէ որ անոնց սրտերը այս իրենց վերայ եկած փորձութեանց միջացաւ երկինքը ուղղեն, և բոլոր վշտացեալ որդիքդ քո սրբութեանդ հաղորդք ըլլան: Կը խնդրենք քենէ, ով Աստուած մեր, սորվեցուր աղքատները սիրել, և կարողութիւն շնորհէ մեզ՝ որ անոնց բարիք ընենք, Յիսուս Քրիստոսի համար. ամէն:

Հայր մեր, որ երկինքն ես, ևն.

Մեր Տէր Յիսուս Քրիստոսի շնորհքը ևն:

Ողորմութեան Երեկոյ.

Ով Տէր Յիսուս Քրիստոս, Դու քո անձդ ունայնացուցիր ու մեզի համար մարդ եղար: Երբէք քո ցաւոդ նման ցաւ եղածէ: Դու մեր ցաւերը վերցուցիր ու մեր վիշտերը վրայ առիր. քո քրտինքդ արեան կաթիլներու պէս գետինը կը հոսէր, Դու անդթութեանց, ծաղրի և ծեծի համբերեցիր և մեզի համար քո արիւնդ խաչին վրայ թափեցիր: Կողքանք և դառնապէս կը ցաւինք մեր մեղաց վրայ: Դուն մեր մեղացը համար, վիրաւորուեցար և մեր անօրէնութեանցը համար ծեծուեցար և մեր մեղքերը քո մարմինովդ խաչափայտին վերայ կրեցիր: Ո՜նչանչեցինք ու չարութիւն ըրինք, քո մեծամեծ բարե-

բարութեանցդ դէմ. ապերախտ գտնուեցանք և քո Սուրբ Հոգիդ վշտացուցինք։ Բայց, ով Ամենասուրբ Տէր, Դու որ քո ծառայիդ Պետրոսին ապաշխարութիւնը ընդունեցիր և գիրկդ առիր, դու որ զղջացող աւազակը քո արեամբդ լուացիր և անոր արդարութեան պատմուճան հագցուցելով քո հետ դրախտը տարիր, ներէ մեզի այս գիշեր և քո ամենապատուական արեամբդ լուա մեզ մեր բոլոր մեղքերէն։ Ով Ամենակարող Աստուած, կը բաղձանք և կը փափագինք քո Սուրբ Հոգւոյդ նորոգութեանը որ մեք միշտ քեզի դէմ մեղանչելէ պաշտպանուինք և կատարեալ սրտիւ քեզի ծառայենք։ Շնորհէ մեզի կը խնդրենք քենէ, որ անոր բազմատեսակ պարգևներովը լեցուինք, որպէս զի այս աշխարհիս խաւարին մէջէն համբերութեամբ և յարատևութեամբ ճամբորդելով և վառած կանթեղներու նման պայծառապէս փայլելով Տէր Յիսուս Քրիստոսի առջևը ելլենք, երբոր իր թագաւորութեամբը գայ։ Այո, Տէր, կը խնդրենք, մեր Տիրնոջին և Փրկչին համար. ամէն։

Հիմայ, ով Տէր, անձերնիս, հոգինիս և մարմիններս իբրև բանաւոր, սուրբ և կենդանի զոհ քեզի կը մատուցանենք և կը խնդրենք որ մեր Օրհնեալ Յիսուսը գայ և յաւիտեան մեր սրտերուն մէջը բնակի, որ մեք իբրև ճիւղ ճշմարիտ Որթին վերայ հաստատուած մնանք և շատ պտուղ բերենք քո Սուրբ Անուանդ փառաց համար. ամէն։

Սաղմ. ՃԺԳ.

1. Ալէլուիա։ Օրհնեցէք, ով Տէրոջը ծառայները. Օրհնեցէք Տէրոջը Անունը։

2. Օրհնեալ ըլլայ Տէրոջը Անունը.
Սկէս ետև մինչև յաւիտեան։
3. Արևելքէն մինչև արևմուտ.
Օրհնեալ ըլլայ Տէրոջը Անունը։
4. Տէրը բարձր է բոլոր ազգերուն վերայ.
Անոր փառքը երկինքէն վեր է։
5. Ո՞եր Տէր Աստուծոյն պէս ո՞վ կայ.
Որ բարձրութեան մէջ կը բնակի։
6. Որ կը խոնարհի.
Երկինքի ու երկրի մէջ եղած բաները տեսնելու։
7. Որ աղքատը փոշիէն վեր կը վերցունէ,
Ու տնանկը աղբանոցէն կը բարձրացունէ։
8. Որ զանոնք նստեցընէ իշխաններուն հետ.
Իր ժողովուրդին իշխաններուն հետ։
Ալէլուիա։

(Այս տեղ Սուրբ գիրքէն մաս մը կարդացուի։)

Ով Տէր, մեր Երկնաւոր Հայրը, մեզի անանկ հոգի մը շնորհէ՝ որ մանր տղոց պէս ըլլանք. խոնարհութիւն հաղցուր մեզի, և սորվեցուր մեզի՝ որ ամեն բանի մէջ քո Սուրբ Կամացդ հնազանդենք։ Հանէ մեր մէջէն ամեն անձնասիրութիւն, հպարտութիւն, խաբէութիւն և անհամբերութիւն, կարողութիւն տուր մեր լեզուները սանձելու և անբարեմիտ և յիմարական խօսքերէ և խորհուրդներէ հեռանալու։ Տէր, օգնէ մեզի մեր ընկերները մեր անձին պէս սիրելու, և պատրաստ ըլլալ ամեն ժամանակ աղքատաց բարիք ընելու։ Ո՞եր մէջը նոր սիրտ ստեղծէ և մեր ներսիդին ուղիղ հոգի

նորոգէ։ Կը գովենք և կը բարձրացուցենք քո Սուրբ Անունդ մեր բոլոր կենացը մէջ և մասնաւորապէս այս օրս մեզի ըրած անթիւ ողորմութեանցդ համար։ Անցած ժամանակիս մեր վերայ հսկէ, և եթէ մեր անկողնին մէջ արթուն մնանք, շնորհէ որ քո ներկայութեամբդ ուրախանանք, և առտուանց ելլենք նոր զօրութիւն հագած և քո սիրոյդ վստահութիւնը վայելելով քեզ աւելի ուրախութեամբ և կատարելութեամբ ծառայենք. Յիսուս Քրիստոսի համար. ամէն։

Ով Ողորմած Աստուած, կը խնդրենք քենէ, օրհնէ բոլոր մեր բացակայ բարեկամները ու ազգականները մասնաւորապէս (այս անուն), անդարձները դարձի բեր, սգաւորները մխիթարէ, թափէ քո շնորհացդ օրհնութիւնները ամեն օր առատօրէն քո սիրելի զաւակացդ վերայ, որ շնորհաց մէջ աճին և հետզհետէ աւելի պտուղ բերեն քո փառացդ համար։ Շնորհէ որ մեք և մեր բոլոր սիրելիները իբրև Յիսուս Քրիստոսի մարմնոյն անդամները միանանք։ Եթէ այս աշխարհիս մէջ իրարմէ հեռու ալ ըլլանք, տուր որ վերջապէս Քրիստոսի գալուստենը Անոր աջ կողմը գտնուինք, ու Անոր յաւիտենական թագաւորութեանն ու փառացը մասնակից ըլլանք, այն նոյն Յիսուս Քրիստոսի մեր Տէրոջը համար։ ամէն։

Ով Աստուած աստուածոց և Թագաւոր թագաւորաց օրհնէ, խոնարհաբար կը խնդրենք, քո ծարայդ (այս անուն) մեր թագաւորը անոր պաշտօնեայները, խորհրդականները և բոլոր այս երկրին իշխաններն ու դատաւորները։ Եւ դու, ով Օրհնեալ Յիսուս՝ որ ամեն իշխանութիւն

ունիս երկինքի մէջ ու երկրի վրայ, դարձուր անոնց սրտերը քո ճամբաներուդ, որ այս երկրին մէջ խաղաղութիւն և երջանկութիւն, կրօնք և աստուածպաշտութիւն հաստատապէս տիրէ: Ա երակենդանացուր քո Եկեղեցիդ, ով Տէր, վերակենդանացուր մեր սրտերը, կը խնդրենք քենէ, և շնորհէ որ մեք և բոլոր քո ժողովուրդդ խաւարի մէջ իբրև լոյս փայլինք կենաց խօսքը ամուր բռնելով՝ որով շատերը փրկուին, մեր Տէրոջը Յիսուս Քրիստոսի արժանաւորութեանը համար. ամէն:

Հայր մեր որ երկինքն ես, ևն:

Ո՛ր Տէրոջը Յիսուս Քրիստոսի շնորհքը, ևն:

Հինգշաբթի Առաւօտ:

Ով Ամենակարող Հայր, Դո՛ւ՝ որ քո Միածին Որդիդ Յիսուս Քրիստոսը մեծ փառքով քո աջ կողմդ բարձրացուցիր, ուր որ հիմայ մեզի տեղ կը պատրաստէ, նայէ ողորմութեամբ մեր վրայ, որոց համար Քրիստոս մեռաւ և հիմայ քո քովդ բարեխօսութիւն կընէ: Ո՛ղջունչ եցինք նէրկինքին դէմ ու քո առջևդ և այլևս արժանի չենք քո որդիքդ կոչուելու: Ո՛ր մեղքերը անթիւ են, բայց Դու զանոնք ամենը գիտես մեր անօրէնութիւնները բարձր լեռներուն պէս են, բայց Յիսուս զանոնք ամենը իր մարմնովը խաչափայտին վերայ կրեց: Ով Քրիստոս, թանձրաւոր փառաց, Տէր զօրաց, դու յաղթանակաւ նէրկինքներէն վեր բարձրացար, դու դերութիւնը գերի

առիր և մարդոց պարգևներ տուիր, տուր մեզի ալ, կը խնդրենք քենէ, այն նոյն պարգևները որ նախնական Եկեղեցւոյն շնորհեցիր։ Դրոշմէ մեր հոգւոց վերայ քո խաղաղութեանդ օրհնութիւնը. և մեզ անմխիթար մի թողուր, այլ ղրկէ մեզի Հօրը խոստմունքը, Հոգւոյն Սրբոյ օծումը։ Առանց քո հոգւոյդ լիութեանը Եկեղեցիդ այրի է և մեք որբ. բայց դու անփոփոխելի կերպով քո փառացդ մէջ կը բնակիս և տակաւին քո ամեն սիրելեացդ կը հրատարակես թէ "Ահա ես ամեն օր ձեզի հետ եմ մինչև աշխարհիս վերջը։" Փառք քեզ, ով Քրիստոս, մեր մեծ Քահանայապետը, այսօր և յաւիտեանս, ամէն։

Ով Տէր Յիսուս Քրիստոս, դու որ մեզի ճամբայ մը բացիր սուրբ տեղը մտնելու վարագուրին մէջէն՝ որ է քո մարմինդ, իբրև մեր Քահանայապետը քո մարմինդ և արիւնդ զոհ ընելով երկինքը անցար, դու ես քո մարմնոյդ, Եկեղեցւոյն, գլուխը, շնորհէ որ մեք և բոլոր քո անդամներդ քո հաղորդակցութիւնդ այնպէս վայելենք միշտ, որ մեր հոգիները շարունակ այն ժամանակին ծառաւը զգան որ ատեն մեք փառքով պիտի տեսնենք զքեզ՝ որ կենդանի ես և կը թագաւորես Հօրն ու Սրբոյ Հոգւոյն հետ իբրև մի Աստուած յաւիտեանս յաւիտենից, ամէն։

Իրապէս Քրիստոս յարութիւն առել է, Ալէլուիա։
Քրիստոս մեռելներէն յարութիւն առել է և ալ չմեռնիր. Ալէլուիա
Ահա կենդանի է Աստուածն յաւիտեանս յաւիտենից։
Եւ դժոխքին ու մահուան բանալիքն ունի. Ալէլուիա։

1. Տէրը իմ Տէրոջս ըսաւ,
Նստէ իմ աջ կողմն, մինչև որ քո թշնամիներդ ոտքերուդ պատուանդան ընեմ։
2. Տէրը քո զօրութեանդ գաւազանը Սիոնէն պիտի ղրկէ.
Դո թշնամիներուդ մէջտեղը դու տիրէ։
3. Ժողովուրդդ քո զօրութեանդ օրը յօժարակամ պիտի ըլլայ սրբութեան զարդարանքներով.
Դո երիտասարդներդ արշալուսին արգանդի ցօղէն աւելի պիտի ըլլան քեզի։
4. Տէրը երդում ըրաւ ու պիտի չզղջայ.
Դու յաւիտեան Մելքիսեդեկի կարգին պէս քահանայ ես,
Փառք Հօր և Որդւոյ և Հոգւոյն Սրբոյ,
Այժմ և միշտ և յաւիտեանս յաւիտենից. ամէն։

(Այս տեղ Սուրբ Գրքէն մաս մը կարդացուի։)

Ով Աստուած, Դու որ կուզես որ բոլոր մարդիկ փրկուին ու ճշմարտութիւնը ճանչնալու դան, ջերմեռանդութեամբ կը խնդրենք քենէ, գթած աչքով նայէ բոլոր Մահմետական ժողովրդոց և երկիրներուն վրայ մանաւորապէս (այս անուն)։ Ընդարձակ դուռ բաց քո խօսքդ անոնց մէջ քարոզելու։ Հաղարաւոր Մահմետականաց սրտերը պատրաստէ, որ Յիսուսի՝ մեղաւորաց միակ փրկչին հաւատան անոնց բոլոր երկիրներուն մէջ կրօնական ազատութիւն հաստատէ։ Կործանէ գերութիւնը, ստապաշտութիւնն ու հարստահարութիւնը և Յիսուս Քրիստոսի Աւետարանին փառաւոր ազատու-

թեանը բեր։ Օրհնէ բոլոր զանոնք Աւետարանելու գործոյն մէջ աշխատողները, և ամեն նորահաւատները աստատէ քո ճշմարտութեանդ վերայ՝ որ կարող ըլլան բենց խաչը առնել և Քրիստոսի հետևիլ։ Պաշտպանէ զանոնք բոլոր իրենց թշնամիներէն։ Օրհնէ, Տէր, կը խնդրենք քենէ, Հայոց, Ասորւոց, Քաղդէացւոց և բոլոր միւս հին Եկեղեցիները՝ որ Ս՝ուհամետական երկիրներու մէջ են մասնաւորապէս (այս անուն), քո գործդ վերակենդանացուր անոնց մէջ, սնապաշտութիւնը անհետացուր անոնց մէջէն։ Սրբէ զանոնք քո Սուրբ Հոգւովդ՝ որ անոնք լոյս ըլլան ու խաւարի մէջ փայլին. քո մեծ Անուանդ պատուոյն և փառացն համար. մեր Տէր Յիսուս Քրիստոսի միջոցաւը. ամէն։

Կօրհնենք և կը գովենք քո Սուրբ Անունդ, ով Տէր, մեր Աստուածը, քո բոլոր ողորմութեանցդ մասնաւորապէս մեր Տէր Յիսուս Քրիստոսի փառաւորապէս քո աջ կողմդ համբառնալոյն համար, քանզի իր մարդկային փառաւորեալ մարմնովը բոլոր երկինքներէն վեր բարձրացաւ և հոն մեզի համար տեղ կը պատրաստէ։ Երկրպագութիւն կը մատուցանենք քեզի, ով Յաղթաւոր փառաց, Տէր զօրաց, Առաջնորդ փրկութեան, քո անջեր երկնից դռները վեր վերցուեցան, յաւիտենական դռները բացուեցան։ Ուրախ ենք որ մեծ Քահանայապետ մը ունինք որ միշտ կենդանի է և բարեխօսութիւն կընէ մեզի համար, որ երկինքը անցար և որուն միջոցաւը ամեն ժամանակ շնորհաց աթոռին առջևը կը մտնենք։ Շնորհակալ ենք քենէ հօրը խոստմանը՝ Հոգւոյն Սրբոյ մկրտութեանը համար և մեզ քո մարմնոյդ Եկեղեցւոյն անդամ՝ ընելուդ համար և ուրախ ենք այն յուսովը՝ որ

դու շուտ պիտի դաս և հարսդ քեզի առնես։ Եւ անոր՝ որ աթոռին վերայ կը նստի, և Դառնուկին և Արքայ Հոգւոյն օրհնութիւն և փառք և զօրութիւն յաւիտեան յաւիտենից, ամեն։

Այլ մեր որ երկինքն ես, ևն։

Ամեն Տէր Յիսուս Քրիստոսի շնորհքը, ևն։

Հինգշաբթի Երեկոյ։

Ով Ամենակարող և յաւիտենական Աստուած, ինչ՞ զարմանալի սէր ցուցուցիր մեզի՝ որ մեք քո որդիքդ կոչուինք։ Դու մեզ քեզի հաղորդակից ըրիր՝ մեզ քո սիրելի Որդւոյդ մարմնոյն անդամ և մեր մարմինները Հոգւոյն Արքայ տաճար ընելով, բայց մեք, ով Տէր՝ մեր Աստուածը, անարժան որդւոյն նման քո պատուիրանքներդ ոտնակոխ ըրինք, քու ստացուածդ փճացուցինք և անհաւատարիմ տնտեսեր եղանք քո մեզի յանձնած բաներուդ, անթիւ մեղքերով Քրիստոսի մարմինը ապականեցինք և Սուրբ Հոգին վշտացուցինք, այնպէս որ զԱստուածն փորձեցինք մեզ բոլորովին ձգելու։ Բայց ով Օրհնեալ Սուրբ Հոգի, կը խնդրենք քենէ՝ որ մեզ չարին չմատնես, այլ մեր սրտերը քեզմով լեցուր, այնպէս որ մեք այսու հետև կատարեալ սրտով քեզ ծառայենք, աշխարհէս զատէ մեզ բոլորովին. շնորհէ որ միշտ մեք Քրիստոսի մէջ բնակինք և Քրիստոս մեր մէջը։ Դու մեզի որդեգրութեան հոգի եղիր ճշմարտապէս վստահութիւն տալով թէ մեք Աստուծոյ որդիքն ենք, և կարողութիւն տուր մեզի՝ որ անոր նման մաքուր ըլլանք. Յիսուս Քրիստոսի Հայրենք. ամեն։

Ով Տէր Յիսուս Քրիստոս, երբ դու մեղի համար գերեզմանին մէջ դրուեցար, քո Եկեղեցիդ սուգ կը պահէր քեզի համար ինչպէս որ հարս մը իր սպաննուած փեսային համար։ Քո աշակերտքդ կուլային և չէին. ուզեր մխիթարուիլ. որովհետև մորթուած հօր մը որբոցը կը նմանէին, բայց երբ դու Յաստուածոյ աջ կողմը համբարձար, անոնք Երուսաղեմդարձան մեծ ուրախութեամբ և շարունակ կօրհնէին ու կը գովէին զՅաստուած։ Մեք ալ կօրհնենք ու կը գովենք քո մեծ Յնունդ՝ որ դու մեղ որբ չթողուցիր, քո փառաւորեալ մարդկային մարմնովդ իբրև գլուխ քո մարմնոյդ՝ Եկեղեցւոյն։ Հօր Յաստուծոյ աջ կողմը նստած ես։ Բայց քո Յաստուածային հոգւովդ դու միշտ մեր հետն ես։ Կը խնդրենք քենէ, ով Յիսուս, լեցուր մեղ քո ուրախութեամբդ. շնորհէ որ մեր խաղաղութիւնը գետի պէս և մեր արդարութիւնը ծովու ալիքներուն պէս ըլլայ։ Տուր որ Հոգւոյն Սրբոյ զօրութիւնը զգանք մեր սրտերուն մէջ, որ մեր բոլոր չար բաղձանքները նուաճէ և մեր հոգին, շունչն ու մարմինը կատարեալ ընէ քո թագաւորութեամբդ եկած ժամանակդ, որ ատեն մեր խոնարհ մարմինը պիտի նորոգես քո փառաւոր մարմնոյդ կերպարանակից ըլլալու այն զօրութիւնովը որ կարող ես ամենը քեզի հնազանդեցուցանելու. քո մեծ անուանդ փառացն համար. ամէն։

Սաղմ իդ.

1. Տէրոջն է երկիրը ու անոր լիութիւնը.
   Յշխարհքը ու անոր բնակիչները։
2. Ինչու որ ինքը անոր հիմերը ծովերուն վերայ ձգեց,
   Ու զանիկայ գետերուն վերայ հաստատեց։

3. Ո՞վ պիտի ելլէ Տէրոջը լեռը.
Կամ ո՞վ պիտի կենայ անոր սուրբ տեղը։
4. Ձեռքերով սուրբը ու սրտով մաքուրը,
Որ ստութեան անձնատուր չըրաւ ու նենգութեամբ երդում չըրաւ։
5. Ընկալայ Տէրոջմէն օրհնութիւն պիտի ստանայ.
Ու իր փրկութեանը Աստուծմէն՝ արդարութիւն։
6. Ահա՛ այնպիսի փնտռողներուն ճեղը աս է.
Որ երեսդ փնտռողները Յակոբն է։
7. Ով դռներ գլուխնիդ վեր վերցուցէք, ու վերցուեցէք, ով յաւիտենական դռներ,
Որ փառաց Թագաւորը մտնէ։
8. Ո՞վ է աս փառաց Թագաւորը
Կարող ու հզօր Տէրը, պատերազմի մէջ հզօր Տէրը։
9. Ով դռներ, գլուխնիդ վեր վերցուցէք, ու վերցուեցէք ով յաւիտենական դռներ,
Որ փառաց Թագաւորը մտնէ։
10. Ո՞վ է աս փառաց Թագաւորը,
Զօրքերուն Տէրը, ինքն է փառաց Թագաւորը։

(Այս տեղ Սուրբ Գրքէն մաս մը կարդացուի։)

Ամենակարող և Ամենողորմ Հայր, խոնարհութեամբ կը դիմանանք քենէ քո Աւետարանիդ լուսոյն համար։ Քո այս ողորմութեանդ համար մեզ աւելի երախտագէտ և մարդկային ազին փրկութեանը համար աւելի նախանձաւոր ըրէ։

Առաքեալս ճոխացուր Քրիստոսի Եկեղեցին Հոգւոյն Սրբոյ շնորհօքը, և օրհնէ անոր հեթանոսաց մէջ քո ճշմարտութիւնդ տարածելու ջանքերը, հունձքը շատ է,

բայց մշակները քիչ, Դու ով Հնձող Տէրը, մշակներ ղրկէ քո հունձքիդ։ Ընդէն ղրկածներդ քո հոգւովդ լեցուր, և կարողութիւն տուր անոնց որ հաւատարմութեամբ և համակրութեամբ քարոզեն թէ Հրէից և թէ Հեթանոսաց Քրիստոսի անքննելի ճոխութիւնը։

Ով Տէր, կը խնդրենք քենէ, թափէ քո Սուրբ Հոգիդ Հրէայներէն, Հեթանոսներէն և Մուհամետականներէն բոլոր Քրիստոսի դարձողներուն վերայ, հանէ զանոնք ամեն խաւարէ ու տգիտութենէ և բեր զանոնք քո Աստուածային լուսոյն և ազատութեանը վերնական զօրութեամբ զանոնք՝ որ Քրիստոսի հաւատարիմ վկայ ըլլան։

Ազատէ բոլոր Մուհամետականք իրենց աւելորդապաշտական խաբէութենէն։ Ով Տէր Յիսուս դու որ Եկեղեցւոյ ճշմարիտ Մարգարէն ես, լուսաւորէ զանոնք ճշմարիտ Մխիթարիչին լուսովը և քո խաչիդ ոտքին աւջևը խոնարհեցուր զանոնք։

Դեռ կոյր կռապաշտից վերայ, և զանոնք իրենց կուռքերէն դարձուր՝ որ զքեզ՝ կենդանի և ճշմարիտ Աստուածը պաշտեն։

Հնորհէ մեզի և բոլոր Քրիստոնէից՝ որ առատութեամբ ցանենք և առատութեամբ հնձենք։

Կօրհնենք և կը գովենք քո մեծ Անուն, ով Տէր, այն ամեն ջանքին ու աշխատութեանը համար՝ որ քո փրկութիւնդ աշխարհիս յայտնելու մասին եղած է քո քարոզդ վախճանին հասցուր ով Տէր, և ընտրելոցդ թիւը լրացուր և քո թագաւորութեանդ դալուստը փութացուր։

Խնդրենք ես և բոլոր մեր սիրելիները քո խնամոցդ կը յանձնենք և կը խնդրենք քեզ՝ որ այս մեր աղօթիցը պատասխանես և մեզ օրհնես Յիսուս Քրիստոսի համար. ամէն։

Հայր մեր որ երկինքն ես, ևն։

Մեր Տէր Յիսուս Քրիստոսի շնորհքը. ևն։

Ուրբաթ Առաւօտ։

Ով Աստուած, Դու՝ որ սիրելի Որդւոյդ արեամբը մէկ նոր ու կենդանի ճամբայ մը բացիր մեզի սուրբ տեղը մտնելու, շնորհէ մեզի կը խնդրենք քեզէ, քո Որդւոյդ Հոգին, որով կարողանանք քեզի մեր հօրը մօտենալ, և Սրբէ մեզ քո երկնային շնորհօքդ, որ մաքուր Սրտով և ամբիծ խղճով մեր առաւօտեան ղոհը, երկրպագութիւնը, աղօթն ու շնորհակալութիւնը քեզի մատուցանենք քո սուրբ Անուանդ փառացն համար. մեր Տէր Յիսուս Քրիստոսի միջոցաւը։

Սատիկ մեղանչեցինք քեզի դէմ, ով Տէր, խօսքով և գործքով։ Ով կրնայ ըսել՝ թէ որչափ կը մեղանչէ, մեր խղճերը այնչափ մեռեալ և խաւար վիճակի մէջ են, որ չենք իմանար թէ երբ քո Սուրբ՝ օրինացդ դէմ յանցաւոր կը դտնուինք. և ինչպէս կարող ենք մեր զանցառութեան մեղքերը թուել։ Դ սրտէ կը ցաւինք մեր մեղացը վերայ։ Դառն է մեզի զանոնք յիշելը, անոնց բեռը անտանելի է։ Քանզի մեր անիրաւութիւններովը, ով Հայր, քեզ անպատուեցինք, Ով Սուրբ Հոգի, քեզ վշտացուցինք, Ով Օրհնեալ Յիսուս, քեզ խաչը հանեցինք։ Ով Յիսուս Քրիստոս, քո խաչիդ համար ներէ

մեզի, մեր ամեն յանցանքները, աղատէ մեզ մեր մեղացը բոլոր կապերէն և յաւիտենական ուխտին արեամբը հաստատէ մեզ քո կամքդ ընելու, որ մեր երկրաւոր կենաց մնացած մասը բոլորովին քո ծառայութեանդ մէջ անցուցնենք, մեզ քո մահուանդ կերպարանակից ըրէ՝ որ քո յարութեանդ ալ մասնակից լինինք. ամէն:

Ով Տէր Յիսուս Քրիստոս, Աստուածութեան ամենաբարձր փառքը թողուցիր և մեզի համար ամենախոնարհութեան և չարչարանաց յանձնառու եղար, և հիմայ իբրև մեր գլուխը դարձեալ Հօր Աստուծոյ աջ կողմը բարձրացել ես, որ տեղ տրտմութիւն ու հեծութիւն չկրնար քեզի հասնիլ: Բայց դու մեզի՝ քու անդամոցդ ամեն մէկին հետն ալ ես այս աշխարհիս վերայ: Ով Օրհնեալ Փրկիչ, դու այսօր ընկեր և մխիթարիչ եղիր ամեն աշխատաւորի: Ղնա ամեն գործաւորի և մշակի հետ իր օրական աշխատութեանը: Պահէ զայն՝ որ քո ճամբայէդ չմոլորի և օրհնէ իր ձեռացը գործը: Հսկէ կնոջ, մօր և զաւկաց վերայ և մեր տները մեր օրտերուն պէս Հոգւոյդ Սրբոյ տաճար ըրէ: Հիւանդաց քովը կեցիր, մխիթարէ զանոնք և անոնց ցաւերը՝ բժշկէ: Շնորհէ, ով Տէր, քո բոլոր զաւկացդ որ իրենց ուժը իրենց օրերուն չափ ըլլայ, և պահէ զանոնք ամեն չար գործքէ. մեր Տէր Յիսուս Քրիստոսի օրհնեալ Անունը համար. ամէն:

Սաղմ ճէ, 1—8.

1. Գոհացէք Տէրոջմէն, ինչու որ բարի է.
Ինչու որ անոր ողորմութիւնը յաւիտեան է:

2. Թոռ ասանկ ըսեն Տէրոջը փրկուածները,
Որոնք փրկեց Թշնամիին ձեռքէն։
3. Ու ժողվեց անոնք երկիրներէն.
Արևելքէն և արևմուտքէն, հիւսիսէն և ծովէն։
4. Անոնք մոլորեցան անապատին մէջ՝ անջուր ճամբուն մէջ.
Բնակելու քաղաք չգտան։
5. Անօթի ու ծարաւ ըլլալով,
Հոգինին իրենց ներսիդին կը մարեր։
6. Ու Տէրոջը աղաղակեցին իրենց նեղութեանը մէջ.
Եւ անիկայ փրկեց զանոնք իրենց տառապանքներէն։
7. Ու անոնց ուղիղ ճամբու մէջ առաջնորդեց
Որ բնակելու քաղաք երթան։
8. Թող գոհանան Տէրոջմէն իր ողորմութեանը համար.
Ու մարդոց որդիքներուն իր ըրած հրաշքներուն համար։
Փառք Հօր և Որդւոյ և Հոգւոյն Սրբոյ
Այժմ և միշտ և յաւիտեանս յաւիտենից. ամէն։

(Այս տեղ Սուրբ Գրքէն մաս մը կարդացուի։)

Ամենակարող Աստուած, Դու՝ որ մարդկային Ազգը սիրելուդ համար Միածին Որդիդ տուիր մարդ ըլլալու և խաչին չարչարանքը կրելու, և անոր պատուական արիւնովը Ընդհանրական Եկեղեցի մը քեզի, ինչպէս որ Դու Յիսուսի անունը ամէն անուանէ վեր բարձրացուցիր,

այնպէս ալ նայէ ողորմութեամբ անոր մարմնոյն՝ Եկեղեցւոյն վերայ՝ զոր Դու Դաւիթն արեամբը ծախու առիր ու եգիպտական գերութենէն ազատեցիր, զատէ քո ժողովուրդդ աշխարհէն և անոր բոլոր մեղքերէն։ Մ՚ինացուր բոլոր Քրիստոնեայները քեզի և իրարու հետ՝ որ իբրև մի մարմին մի հոգւով լեցուած, քո մեծ փրկութեամբդ ու բախանայ։ Մ՚եր բերանը նոր երգ դիր այս աշխարհիս պղծութենէն փրկուողներուն երգը։ Սորվեցուր մեզի Մ՚ովսեսի և Դաւիթն նոր երգը։ Ով Տէր, կը խնդրենք քենէ, օրհնէ այս ընտանեաց ամեն մէկ անդամը բոլոր մեր բարեկամներն ու ազգականները, մասնաւորապէս (այս անուն), որ մենէ հեռի են. լեցուր մեզ քո փառացդ նախանձովը, ամեն մարդոց փրկութեան եռանդուն փափագովը և ճշմարիտ սիրով դէպ 'ի աղքատները։ Օրհնէ բոլոր Քրիստոնեայ թագաւորներն, իշխաններն ու կառավարիչները։ Հնորհէ՝ որ պատերազմներն ու խռովութիւնները դադարին և խաղաղութիւն ու ճշմարտութիւն հաստատուի ամեն ազգաց մէջ։ Նայէ մասնաւոր հաճութեամբդ քո ծառայիդ (այս անուն) մեր թագաւորին վերայ, և Դու, ով Տէր Յիսուս, թագաւոր թագաւորաց և Տէր տէրանց, կառավարէ և օրհնէ այս մեր երկիրը ու ազգը։ Ով ամեն մարդոց Հայրը, կը խնդրենք քենէ, դթա ամեն մարդոց վերայ։ Դու այնչափ սիրեցիր աշխարհը՝ որ քո Մ՚ածին Որդիդ իբրև զոհ ամենուն համար տուիր, օրհնէ բոլոր Հրէայները, Մ՚ուհամեթականները, կռապաշտները ու անհաւատները, բեր հեթանոսաց լրութիւնը, քո փարախիդ մէջ բեր ժողվէ Իսրայէլի մնացորդը և թափէ քո սուրբ հոգիդ ամեն մարմնոյ վերայ։ Պահէ մեզ այսօր, ով Տէր, քո հզօր զօրութեամբդ ամեն

մեղքէ, ամեն վտանգէ և նեղութենէ, քո սիրելի Որդ-
ւոյդ՝ մեր Տէր Յիսուս Քրիստոսի համար. ամէն։

Հայր մեր որ երկինքն ես, ամէն։

Մեր Տէր Յիսուս Քրիստոսի շնորհքը, ամէն։

Ուրբաթ Երեկոյ։

Ով Երկնաւոր Հայր, խորին խոնարհութեամբ քո
շնարհացդ աթոռին կըմօտենանք այս երեկոյ անձերնէս
զղուելով։ Հպարտութեամբ և ապստամբութեամբ,
և անձնասիրութեամբ և ապերախտութեամբ անցու-
ցինք այսօրս քո առջևդ, մեր սիրած ճամբաները ընտ-
րեցինք և մեր սրտին բաղձանացը հետևեցանք, փոխանակ
ամեն բանի մէջ քո կամացդ հպատակելու։ Մեր հաւատքին
տկարութեանը պատճառաւ մեր սէրը պաղ է, ու մեր
նախանձը մեռած։

Կենդանացուր մեզ քո խօսքիդ համեմատ քո սիրելի
Որդւոյդ պատուական արեամբը լուա մեզ մեր այսօրուան
բոլոր մեղքերէն։ Ով Տէր Յիսուս, մեր մեծ Քահանայա-
պետը, խօսէ մեր ամեն մէկուն սրտին և ըսէ։ "Որ-
դեակ, քաջալերուէ, քո մեղքերդ քեզի ներուել են։ Դու
մեզի համար քառասուն օր և քառասուն գիշեր ծոմ
պահեցիր, ժուժկալ ըլլալու կարողութիւն տուր մեզի՝ որ
մեր մարմինը հոգւոյն հպատակ ըլլայ և մեք ամեն բանի
մէջ ընդունելի կերպով ծառայութիւն ընենք քեզի։
Դու գլուխդ դնելու տեղ չունէիր, շնորհէ որ մեք կերա-
կուր՝ ու հանդերձ ունենալով անով բաւականանք, և

լեցուր մեր սրտերը աղքատաց սիրովը։ Դու հեզ էիր ու սրտով խոնարհ, հագուեցուր մեզ խոնարհութեամբ։ Դու այն պէս կը խօսէիր որ մէկը երբէք քեզի պէս չէր խօսէր. կարողութիւն տուր մեզի՝ որ լեզուներնիս սանձենք և զանոնք քո գովութեանդ համար գործածենք՝ քո մեծ Անունդ փառաւորելով և իրարու շինութիւն տալով։ Դո առջևդ դըրուած ուրախութեանը համար դու խաչը յանձն առիր շնորհէ որ մեք ալ ամեն օր մեզի յատկացեալ խաչը առնենք և քո ետևէդ գանք։ Դու մեր մեղացը համար մեռար և մեզ արդարացուցնելու համար յարութիւն առիր շնորհէ՝ որ մեք քեզի հետ խաչուինք մեղաց համար։ Ով Աստուած Դու եղիր մեր ամեն օրուան կերակուրը, մեր առաջնորդն ու զօրութիւնը այս անապատին մէջ, և մեր ուրախութիւնն ու փառքը՝ երկնից մէջ։ Ով երկինք և երկրի մեծ Աստուածը, շնորհէ մեզի այս գիշերը քո՝ սրբական օրհնութիւնդ. տուր որ քո յաւիտենական բաղուկներդ մեր գլխուն տակը ըլլան և սիրոյդ դրօշակը մեր վերայ։ Ու մեր սրտերը քեզի և զանոնք բոլորովին քուկդ ըրէ և պահէ յաւիտեան. մեր Փրկիչ Յիսուս Քրիստոսի համար. ամէն։

Յոյց մեզ, Տէր, քո ողորմութիւնդ.
Եւ քո փրկութիւնդ տուր մեզ։
Տէր, լսէ մեր աղօթքը.
Եւ մեր աղաղակը քո առջևդ թող ելլէ։

Աղմ ճգ։

Ահա որչափ բարի ու որչափ վայելուչ է
Որ եղբայրները իրարու հետ միաբանութեամբ բնակին։

2. Ան աղնիւ իւղին պէս է՝ որ գլխուն վրայէն մօրուքին վերայ,
Ահարոնին մօրուքին վերայ վազեց,
Ու մինչև անոր զգեստներուն ծայրը իջաւ։
3. Սիոնի լեռներուն վերայ իջած Հերմոնին շաղին պէս է.
Ինչու որ Տէրը հոն հաստատեց օրհնութիւնը ու կեանքը մինչև յաւիտեան։
Փառք Հօր և Որդւոյ և Հոգւոյն Սրբոյ,
Այժմ և միշտ և յաւիտեանս յաւիտենից. ամէն։

(Այս տեղ Սուրբ Գրքէն մաս մը կարդացուի։)

Ով Հայր, Որդի և Սուրբ Հոգի, դթա մեզի թշուառ մեղաւորներուս, ազատէ բոլոր անոնք՝ որ Յիսուսի Անունը կը կանչեն, ամեն չարիքէ և չարութենէ, մեղքէ և սատանային որոգայթներէ, փառասիրութենէ և կեղծաւորութենէ, ամեն ատելութենէ, չարակամութենէ և չարասիրութենէ, ամեն սխալ վարդապետութենէ, հերետիկոսութենէ հերձուածողութենէ, խստասրտութենէ և քո խօսքդ ու պատուիրանքդ անարգելէ։

Բարերար Աստուած, ազատէ մեզ։

Քո Սուրբ մարդեղութեանդ խորհրդին համար, քո սուրբ ծննդեանդ ու թլփատութեանդ համար, քո տագնապիդ ու արեան քրտինքիդ համար, քո խաչիդ և չարչարանացդ համար, քո պատուական մահուանդ ու թաղմանդ համար, քո փառաւոր յարութեանդ ու համբարձմանդ համար և Սրբոյ Հոգւոյն դալստեանը համար։

Բարերարը Աստուած, ազատէ մեզ։

Մ՝եք մեղաւորներս կը խնդրենք քենէ, որ սուրբ և Ընդհանրական Եկեղեցիդ ըստ օրինի կառավարես։ Որ Սուրբ Հոգւոյդ ամեն պարգևները և Հոգւոյն պաշտօններն ու կարգերը վերադարձուր անոր սուրբերուն հաստատութեանը համար, պաշտօնին գործին համար և Քրիստոսի մարմնոյն շինութեանը համար, մենչև որ մեք հասնինք կատարեալ մարդ ըլլալու, Քրիստոսի լման հասակին չափը ունենալու։

Կը խնդրենք քենէ, լսէ մեզի, Բարերար Աստուած։

Բարեհաճէ, Տէր լուսաւորել բոլոր եպիսկոպոսներն, երիցներն ու սարկաւագները որ քո խօսքդ ճշմարտապէս իմանան և հասկանան և իրենց քարոզութեամբն ու վարքովը յայտնեն և ցուցունեն։

Կը խնդրենք քենէ, լսէ մեզի, Բարերար Աստուած։

Բարեհաճէ քո Սուրբ Անուանդ վախովը պահել և զօրացունել բոլոր թագաւորները, իշխաններն ու կառավարիչները մասնաւորապէս քո ծառայդ (այս անուն) մեր թագաւորը, և իշխէ անոնց վերայ քո Հոգւոյդ շնորհքովը՝ որ արդարութիւն ու իրաւունք ընեն, և քո ճշմարտութիւնդ ծաղկի բոլոր աշխարհիս վերայ, և բարեհաճէ խաղաղութիւն, սէր և միաբանութիւն տալ բոլոր ազգաց։

Կը խնդրենք քենէ, լսէ, մեզի, Բարերար Աստուած։

Բարեհաճէ մեզի այնպիսի սիրտ մը տալ, որ քեզ սիրենք, քենէ վախնանք և ժրութեամբ քո պատուիրանացդ համեմատ ապրինք։ Որ բոլոր ժողովրդեանդ աղերկնային շնորհքդ պարգևէ, որ խօսքդ մաքուր ընենդունին և Հոգւոյն պտուղները յառաջ բերեն։

Կը խնդրենք քենէ, լսէ մեզի, Բարերար Աստուած։

Բարեհաճէ բոլոր մոլորեալները քո ճշմարտութեանդ բերել, հաստատ կեցողները զօրացունել, վատասիրտները մխիթարել և պահպանել, ինկածները կազնեցընել և սատանայն մեր ոտքին տակը խորտակել:

Կը խնդրենք քենէ, լսէ մեզի, Բարերար Աստուած:

Բարեհաճէ օգնութիւն և մխիթարութիւն ղրկել ամեն անոնց՝ որ վտանգի, աղքատութեան և նեղութեան մէջ են, պաշտպանել զանոնք՝ որ ծովու և ցամաքի վերայ ճամբորդութիւն կընեն, երկանց մէջ եղող կանայք, հիւանդները ու երեխայքը, գթութիւն ցուցունել բոլոր բանտարկելոց և գերելոց և խնամել ու հոգալ բոլոր սրբերն ու այրիները և բոլոր զրկեալներն ու հարստահարեալները:

Կը խնդրենք քենէ, լսէ մեզի, Բարերար Աստուած:

Բարեհաճէ գթալ ամեն մարդու վերայ, ներել մեր թշնամեաց հալածչաց և չարախօսաց և անոնց սիրտը դարձունել:

Կը խնդրենք քենէ, լսէ մեզի, Բարերար Աստուած:

Բարեհաճէ ողորմութեամբ երկրին բերք պարգևել և պաշտպանել որ յարմար ժամանակին վայելենք:

Կը խնդրենք քենէ, լսէ մեզի, Բարերար Աստուած:

Բարեհաճէ շնորհել մեզի ճշմարիտ ապաշխարութիւն, ներել մեր բոլոր մեղքերը, անհոգութիւններն ու տգիտութիւնները և զարդարել մեզ Հոգւոյդ Սրբոյ շնորհօքը՝ որ մեր վարքն և բարքը քո Սուրբ Խօսքիդ համեմատ ըլլայ:

Կը խնդրենք քենէ, լսէ մեզի, Բարերար Աստուած:

Որդի Աստուծոյ, կը խնդրենք քենէ, լսէ մեզի:

Որդի Աստուծոյ, կը խնդրենք քենէ, լսէ մեզի:

Ով Գառն Աստուծոյ, դու որ աշխարհիս մեղքը կը վերցունես,

Շ ՆՈՐՀԷ ՄԵԶԻ ՔՈ ԽԱՂԱՂՈՒԹԻՒՆԴ։

Ով Գառն Աստուծոյ, Դու որ աշխարհիս մեղքը կը վերցունես,

ՈՂՈՐՄԷ ՄԵԶԻ։

Հայր մեր որ երկինքն ես, ևն։
Փառք Հօր և Որդւոյ և Հոգւոյն Սրբոյ,
Այժմ և միշտ և յաւիտեանս յաւիտենից. ամէն։
Ամենակարող Աստուած, Դու որ մեզի հիմայ շնորհք պարգևեցիր, միաբանութեամբ մեր խնդրուածքը քեզի մատուցանելու, և կը խոստանաս՝ թէ ուր որ երկու կամ երեք մէկ տեղ ժողովուած ըլլան իմ անունովս, ես անոնց աղաչանքը պիտի ընդունիմ. հիմայ ով Տէր, կատարէ քո ծառայից փափագներն ու աղերսները՝ ինչպէս որ քեզ համար օգտակար կը սեպես, այս աշխարհիս մէջ քո հաշտարտութեանդ գիտութիւնը շնորհելով և գալու աշխարհին մէջ յաւիտենական կեանք. ամէն։

Ս՝ԵՐ ՏԷՐ ՅԻՍՈՒՍ ՔՐԻՍՏՈՍԻ ՇՆՈՐՀՔԸ, ևն։

Շ ԱԲԱԹ ԱՌԱՒՕՏ։

Ով Յաւիտենական Տէր Յիսուս, դու Եհովային բարկութեան գաւազանովը զարնուեցար, այնպէս որ քո վիրաբեալ կողէդ արիւն ու ջուր հոսեց։ Ինչպէս որ եղջիւրն ջուրի վտակներուն կը փափագի, այնպէս ալ մեր հոգիները քեզի կը փափագին, ով Տէր։ Գիտենք թէ

բան մը չէ կարող մեր հոգւոց անօթութիւնն ու ծարաւը անձընել քենէ՛ի զատ, ով Աստուած, որ մեր ժառանգութիւնն ու բաժակին բաժինն ես։ Մեր չափազանց մեղասիրութեանը պատճառաւ աշխարհին, անոր ցանկութեանը, հպարտութեանը և ունայնութեանը հետևեցանք, մարդոց փառքը փնտռեցինք, անձնասիրութիւն ու ամբարտաւանութիւն ըրինք, զանազան ցանկութեանց և հաճոյից գերի եղանք։ Այս առտու քո արեանդ աղբիւրին կը մօտենանք, Տէր Յիսուս, որ լուացուինք ձիւնէն աւելի ճերմակ ըլլանք։ Օ՜արաւ ունենալով կենաց ջրոյն ակին կուգանք՝ որ միշտ քենէ կը հոսէ։ Դու մեր մեղացը համար ծեծուեցար, և մեք հիմայ պէտք է քենէ խնդրենք, ու կենաց ջուրը պիտի հոսէ։ Օգնէ մեզի հիմայ, կը խնդրենք քենէ, որ քո օրհնեալ խօսքդ կարդանք, իմանանք, սովրինք և սրտերնուս մէջ առնենք։ Բոլոր մեր հոգևոր հիւանդութիւնները բժշկէ, որ քեզի ունեցած ծարաւնիս իրապէս զգանք։ Եւ դու, ով Սուրբ Հոգի մեր սրտերը լեցուր այսօր, որ Յիսուս Քրիստոսի խոստմանը համեմատ մեր փորերէն կենդանի ջրոյ գետեր բղխին, քո Անուանդ համար, մեր Տէր Յիսուս Քրիստոսի միջոցաւը. ամէն։

Ով Օրհնեալ Տէր Յիսուս Քրիստոս, դու որ մեր փրկութեան գործոյն համար խոնարհեցար մեզի համար մեռնելու և թաղուելու, կը խնդրենք քենէ, որ դու քո մարմինդ՝ Եկեղեցին, ամենևին երեսէ չձգես, հապա շարունակ մասնաւոր ներկայութեամբ ժողովրդեանդ մէջ գտնուիս և Սրբոյ Հոգւոյն մխիթարութեամբը անոնց ապցելութիւն ընես այս աշխարհիս խաւարին մէջ՝ որ համ-

բերութեամբ սպասեն յարութեանդ փառացը, երբ դու առանց մեղաց, փրկութեան համար պիտի յայտնուիս. ամէն:

Սաղմ. կգ. 1—5:

1. Ով Աստուած, դու ես իմ Աստուած, ես առտուանց քեզ կը փնտռեմ.
Հոգիս կը ծարաւի քեզի, ու մարմինս քեզի կը փափագի չոր ու ծարաւ տեղը, ուր ջուր չկայ.
2. Որ զօրութիւնդ ու փառքդ տեսնելու համար,
Ինչպէս որ քեզ տեսած իմ սրբարանիս մէջը:
3. Որովհետև քո ողորմութիւնդ կեանքէն աղէկ է.
Իմ շրթունքներս քեզ պիտի գովեն:
4. Այսանկ պիտի օրհնեմ քեզ իմ կենացս մէջ.
Ու քո Անունովդ ձեռ քերս վեր պիտի վերցունեմ:
5. Իբր թէ ճարպով ու պարարտութիւնով պիտի կշտանայ իմ անձս.
Ու ցնծութեան շրթունքներով պիտի գովէ քեզ իմ բերանս:
Փառք Հօր և Որդւոյ և Հոգւոյն Սրբոյ,
Այժմ և միշտ և յաւիտեանս յաւիտենից. ամէն:

(Այս տեղ Սուրբ Գրքէն մաս մը կարդացուի:)

Ամենակարող Հայր, մեք չկանչած, Դու կը լսես; և անի որ մեք դեռ կը խօսք՝ Դու կը պատասխանես: Որ առայիցդ ամեն մէկուն ցաւն ու հոգը գիտես և մեր մեն վշտացը կարեկցութիւն կը ցուցընես, շնորհէ մեզի յաղ այն խաղաղութիւնը՝ որ ամեն միտքէ վեր է և զոր չխաբէր ոչկրնայ տալ և ոչ կրնայ առնել: Կերպակերպ զ հիմայ երկնային հացով: Ա՛ռ ծարաւ ենք, ով էր, խմցուր մեզի քո հոգիէդ՝ որ մենք կենդանի ջուրի

գետեր բղխին։ Որ լուսոյդ պայծառ ճառագայթները փայլեցուր Եկեղեցւոյդ վերայ և սրբէ բոլոր քո զաւակներդ Հոգւով Սրբով։ Շնորհէ որ խօսքդ առատապէս բնակի քո Աւետարանիդ պաշտօնէիցը մէջ ամեն իմաստութեամբ և հոգւոր իմացողութեամբ։ Ողորմութեամբ նայէ Ընդհանրական Եկեղեցւոյն ամեն ճիւղերուն վերայ՝ որ Յիսուսի Աւետարանին պարզութենէն և ճշմարտութենէն հեռացել են, մաքրէ զանոնք ամեն աւելորդապաշտութենէ և մեղաց մարդուոյն բոլոր խաբէութիւններէն, որ ճշմարտութեանդ պայծառ լոյսը անոնցմէ ցոլանայ։ Հանէ քո բոլոր ժողովուրդդ հոգւոր Բաբիլոնէն և շուտով մաքրէ ու զարդարէ քո ճշմարիտ Եկեղեցիդ, որ հարսի նման իր փեսային գալստեանը սպասէ։ Ով Տէր, շնորհէ մեզի, կը խնդրենք քենէ, որ ինչպէս Յովհաննէս Մկրտիչ մեր Փրկչին առաջին գալստեանը ճամբայ բացաւ, այնպէս ալ հիմա ամեն երկրի, ամեն քաղաքի և ամեն գիւղի մէջ Քրիստոսի համար դրօշակ մը պարզուի։ Օրհնեցուր, ով Ստուած, ամեն հեթանոսութենէ դարձողները, և ամեն կռապաշտ երկրի մէջ ճշմարիտ հոգւոր աղքատներն ու վշտացեալները և հարուստներուն շնորհք պարգևէ՝ որ իրենց անստոյգ հարստութեանը չվստահին հապա քեզի կենդանի և ճշմարիտ Ստուածդմ։ Շնորհէ որ աղքատները հաւատքով հարուստ ըլլան և հարուստներն ալ հոգւով աղքատ։

Կերկրպագենք, կօրհնենք և կը՛ բարձրացունենք քո մեծ Անունդ, ով Տէր Ստուած, երկնաւոր թագաւոր և Հայր Ամենակարող։

Ով Տէր միածին Որդի Յիսուս Քրիստոս, Տէր Աստուած, Գառն Ստուծոյ և Որդի Հօր, որ աշխարհին

Մեղքը վերցուցիր, գոհութիւն կը մատուցանենք քեզի քո մեծ փառացդ համար, քանզի, Դու միայն ես Սուրբ, Դու միայն ես Տէր, Դու միայն ես, ով Քրիստոս, Սրբոյ Հոգւոյն հետ բարձրեալ Հօր Աստուծոյ փառաքը. ամէն։

Ամենակարող Աստուծոյն, Հօրը, Որդւոյն և Սրբոյ Հոգւոյն օրհնութիւնը մեր ամենուս հետը ըլլայ միշտ. ամէն։

Հ. աբաթ Երեկոյ։

Յաւիտենական, Անփոփոխելի Եհովայ։ Դու միայն նմանութիւն ունիս, որ լոյսը հանդերձի պէս կը հագնես, որ երկինքը վարագուրի պէս կը տարածես և վերարուի մը պէս կը դալարես, բայց Դու նոյն ինքն ես ու քո արիներդ պիտի չպակսի։ Ողորմութեամբ մէկ ուրիշ սրբաթի մըն ալ վախճանին հասցուցիր մեզ, Ով Աստուած քանիքի վրայի խոտին պէս ենք, որ դեռ չփրցուած կը մնայ, Այսու ամենայնիւ քո Աստուածային մեծառութեանդ դէմ յանցաւոր գտնուած ենք ամբարտաւան, ապստամբ և պիղծ խօսքերով, խորհուրդներով և գործքերով։ Ով Աստուած, զօրացուր մեզ՝ որ այս գիշեր ձերինիս քննենք, քո առջևդ խոնարհինք և հողի ու խիրի վերայ ապաշխարենք։ Քո սիրելի Որդւոյդ աստուական արեամբը լուա մեզ մեր բոլոր մեղքերէն։

Ով Օրհնեալ Յիսուս, դու՝ որ քո մարմինդ մեզի համար խաչելու և թաղուելու տուիր, կը խնդրենք քեզ, շնորհէ որ մեք ալ քեզի հետ խաչուինք և Սրբոյ Հոգւոյն ճշմարիտ մկրտութեամբը քեզի թաղուինք։ Շնորհէ որ հաղորդ ըլլանք քո ամենախորին խոնարհութեանդ, որ քո յարութեանդ փառադն ալ մասնակից

ըլլանք։ Ինչպէս որ դու մեր մեղքերը ծովուն անդունդին մէջը թաղեցիր, կռնակիդ ետևը նետեցիր և խոստացար որ այլ ևս զանոնք չյիշես. այնպէս ալ ողորացուր մեզ որ ետևի եղածները մոռնանք ու Քրիստոս Յիսուսով եղած Աստուծոյ վերին կոչմանը մրցանակին վազենք. Հնորհէ մեզի այս դիշեր քո Հայրական օրհնութիւնդ և տուր որ քո օրուանդ մէջ հոգին վրանիս գայ։ Հնորհք պարգևէ, Տէր, մենէ ամեն անոնց որ յոյս ունին վաղը Սուրբ Հաղորդութեան մերձենալու, որ բոլոր քեզի հաւատացողներուն համար պատրաստածդ հարսանեաց հանդերձովը մոտենան, այնպէս որ հոգևորապէս Քրիստոսի մարմինը ուտեն և արիւնը խըմեն, որով անոնք Քրիստոսի հետ մի ըլլան և Քրիստոս անոնց հետ։ Քո Աւետարանիդ լոյսը այս դիշեր բոլոր պաշտօնէիցդ վերայ ծագեցուր, որով անոնք կարողութիւն ստանան քո բոլոր ճշմարտութիւնդ համարձակութեամբ քարոզելու քո Անուանդ փառացը, քո մարմնոյդ՝ Եկեղեցւոյն շինութեանն ու մեղաւորաց դարձին համար. մեր Տէր Յիսուս Քրիստոսի համար. ամէն։

Սաղմ զ. 1—6 և 12—17։

1. Ով Տէր, դու մեզի ապաւէն եղար
Ազգէ մինչև ազգ։
2. Լեռներուն ծնանելէն առաջ, ու երկրի և աշխարհի
ստեղծուելէն առաջ,
Յաւիտենից մինչև յաւիտեանս դու ես Աստուած։
3. Դու մարդը փոշի կը դարձուներս, ու կըսես.
Ետ դարձէք, մարդոց որդիներ։
4. Այսն զի հազար տարին քո առաջիդ երեկուան
օրին պէս է՝ որ անցաւ.

Ով Տէր մեր Աստուածը, մեծ է քո երկայնամտութիւնդ ու քաղցր ողորմութիւնդ, դէպ 'ի մեզ։ Այս ամբողջ շաբաթին և մեր անցեալ կենաց բոլոր շաբաթներուն մէջ ալ անպիտան ծառայ ենք եղեր քեզի։ Եթէ քո բարի կամքդ է՝ որ մեզի կեանք պարգևես մէկ ուրիշ կիրակի օրուան մըն ալ լոյսը տեսնելու, շնորհէ՝ որ քո Հոգւովդ լեցուինք և այնուհետև և քեզի բոլոր սրտով ծառայենք։ Կը խնդրենք քենէ հիմայ քո մանաւոր օրհնութիւնդ ղրկէ այն ժողովքին վերայ, որուն հետ վաղը քեզի երկրպագութիւն պիտի մատուցանենք։ Ամէն պաշտօնէից և թէ ժողովրդեան աղօթից և աղաչանաց հոգի շնորհէ, մեր սրտերը լուսաւորէ և մեր շրթունքները բաց՝ որ քո մեծ Անունդ օրհնենք և գովենք։ Շնորհէ՝ որ քո խօսքդ գտնանք և ուտենք. այնպէս որ մեր սրտին ուրախութիւն և ցնծութիւն ըլլայ։

Շնորհէ՝ որ քո խօսքդ սորվեցունող և քարոզող ծառայներդ երկնառաք Սուրբ Հոգւովդ իրենց պաշտօնը կատարեն։ Շնորհէ՝ որ վաղը երկնից մէջ մեծ ուրախութիւն ըլլայ շատ մեղաւորաց վերայ՝ որ կապաշխարեն։ Քո՛ եր շրթունքներուն պահապան եղիր, կը խնդրենք քենէ, զօրացուր մեզ՝ որ ոչ միայն վաղը այլ և ամեն ժամանակ մեր լեզուները սանձենք, շնորհէ՝ որ մեր խօսքերը շնորհքով և աղով համակցուած ըլլան։ Քո օրհնութիւնդ ղրկէ հիմայ մեր ընտանեաց ամեն մէկ անդամոցը վերայ թէ անոնց որ հոս ներկայ են և թէ անոնց որ բացակայ են։ Օրհնէ մեր բարեկամները մանաւորապէս (այս անուն)։ Վերջապէս կը խնդրենք քենէ հոգա աղքատաց կարօտութիւնները, և զանոնք քո

Սուրբ Հոգւովդ միխիթարէ և քո Հոգիդ թափէ ամէն մարմնոյն վերայ Յիսուս Քրիստոսի համար. ամէն։

Հայր մեր որ երկինքն ես, Լեն։

Տէրը օրհնէ մեզ, և պահէ. Տէրը պայծառացունէ իր երեսը մեր վերայ, ու ողորմի մեզի. Տէրը իր երեսը մեր վերայ վերցունէ, և խաղաղութիւն տայ մեզի, Հիմայ և յաւիտեանս. ամէն։

ՀՈՒՆԳԱՍԷՆՏԱԼ ԳՐԱԴԱՐԱՆ
ՊԱՊԴԱՍ

London : Gilbert & Rivington, St. John's Square & Whitefriars Street.

579
29